

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ**

• ՀՀ կառավարության գործունեության ծրագրի՝ հանրակրթության ոլորտի բարեփոխումների շրջանակում իրականացվել են մի շարք գործընթացներ, մասնավորապես, ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովման նպատակով հանրապետության բոլոր դպրոցների համար ստեղծվել են անհատական կայքեր: Ներկայումս ընթանում է համապատասխան տեղեկատվության տեղադրման գործընթացը: Սկսվել են միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի, դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության մշակման, նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրության գործընթացները: Գյուղական դպրոցների և էլեկտրոնային կրթության զարգացման շրջանակում կազմակերպվել են փորձնական տեսադասեր՝ մարզային դպրոցների մասնակցությամբ: Ընտրվել են հանրապետության 10 առաջատար դպրոցներ, որոնք պատրաստ են օժանդակել աջակցության կարիք ունեցող ուսհաստատություններին: Մշակվել է հանրակրթական դպրոցում ֆինանսական և տնտեսագիտական կրթության ապահովմանն ուղղված քայլերի ժամանակացույց՝ նոր ուսումնական տարվանից ծրագիրը սկսելու պարտադիր պայմանով: Ստեղծվել է Օտար լեզուների դասավանդման հայեցակարգի մշակման աշխատանքային խումբ՝ անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի, գերմաներենի ենթախմբերով: Բացի այդ, ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Արարատյան բակալավրիատի կրթության գերազանցության ազգային ծրագիրը», որի առաջին փուլը կմեկնարկի մարզային ավագ դպրոցներից: ՀՀ ԿԳ նախարարի հրամանով փոփոխություններ են կատարվել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսհաստատությունների 2016-2017 ուստարվա օրինակելի ուսպլաններում՝ բեռնաթափելով 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ուսումնական

ծրագիրը՝ սովորողների ընտրությանը թողնելով 3 առարկա: Պետական ավարտական քննության թիվը նվազեցվել է՝ 6-ի փոխարեն սահմանելով 3: Մշակվել են հանրակրթության պետական կրթակարգը, առարկայական չափորոշիչները և ուսումնական ծրագրերի վերանայման հայեցակարգը: «Ազգային կրթակարգի» նախագիծն ավարտական փուլում է: Ձևավորվել է Դիլիջանում կրթական կլաստեր ստեղծելու միջգերատեսչական աշխատանքային խումբ:

- ՀՀ-ում ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը 2016թ. ավելացել է 78-ով: Այժմ ՀՀ-ում գործում է ներառական կրթություն իրականացնող 260 հանրակրթական ուսումնական հաստատություն, որտեղ ընդգրկված է շուրջ 6700 երեխա: Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման շրջանակներում ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» թիվ 1047-Ն, «Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» թիվ 1058-Ն, «Տարածքային ու հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» թիվ 968-Ն, «Գորիսի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» թիվ 986-Ն, «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» թիվ 969-Ն իրավական ակտերը:

- 2016 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՏՀՏ ոլորտը ներկայացնող 3 խոշորագույն՝ «Վիվասել ՄՏՍ», «Սինոփսիս Արմենիա», «Յունիքոմփ» ընկերությունների հետ կնքվել է փոխըմբռնման ևս մեկ հուշագիր, համաձայն որի՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Հեռահաղորդակցության հիմունքներ» և «Միկրոէլեկտրոնիկա» առարկաների ներդրումն ընդլայնվել է՝ ընդգրկելով ևս 5 ավագ դպրոց:

**«Ազգային երգ ու պար» առարկայի չափորոշիչի և ծրագրի մշակում և հաստատում**

2016-2017 ուստարում «Ազգային երգ ու պար» առարկան իրականացվել է հանրապետության 117 դպրոցների 5-7-րդ դասարաններում:

**Ազգային փորրամասնությունների դպրոցների համար դասագրքերի տպագրություն**

Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար պետական բյուջեի միջոցների հաշվին տպագրվել և տրամադրվել են եզդիերեն «Այբբենարան», «Եզդիերեն լեզու և գրականություն-3», «Եզդիերեն լեզու և գրականություն-4», «Եզդիերեն լեզու և գրականություն-5», «Եզդիերեն լեզու-3-5», «Քրդերեն-10», «Քրդերեն-11», «Քրդերեն-12» դասագրքերը:

**Ազգային փոքրամասնությունների դպրոցների ուսուցիչների վերապատրաստում**

2016 թվականին իրականացվել է եզդիերեն դասավանդող 30 ուսուցչի վերապատրաստում:

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման մեթոդաբանության լրամշակում և ներդրում**

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել և հաստատվել է վարկանիշավորման նոր մեթոդաբանությունը, որով կիրականացվի վարկանիշավորման գործընթացը:

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների արեստավորման և փարակարգերի շնորհման գործընթացի կազմակերպում**

- 2016 թվականին ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ
- 2016 թվականին առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել շուրջ 700 ուսուցչի, իսկ 2-րդ աստիճանի տարակարգ՝ շուրջ 20 ուսուցչի:

**Պետական բյուջեով տպագրվող դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հայտերի պատրաստում**

- Պետական բյուջեով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում գործածության անվճար տրվող դասագրքերը:
- Պետական բյուջեով տպագրվել և բաշխվել են հանրակրթական դպրոցների «Հայոց լեզու-12», «Հայ գրականություն-12», «Հայոց պատմություն-12», «Հասարակագիտություն-12» դասագրքերը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանն են ներկայացվել տարբեր հրատարակչություններից, անհատ հեղինակների կողմից մշակված ուսումնական նյութեր:

**Նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնում**

«Կրթության բարելավում» վարկային նոր ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում հիմնվել է շուրջ 30 նախակրթարան՝ շուրջ 600 երեխայի ընդգրկմամբ:

**Դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաներ**

2016թ. անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից, որոնց մասնակցել է շուրջ 1460 սովորող, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներից՝ շահելով 15 մեդալ՝ 1 ոսկի, 3 արծաթ և 11 բրոնզ:

**Հանրապետական նշանակության մրցույթների կազմակերպում**

- «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» և «Տարվա լավագույն դաստիարակ» ամենամյա մրցույթի հանրապետական փուլին այս տարի մասնակցել է 33 մանկավարժ՝ ՀՀ բոլոր մարզերից և Երևանից: Տարվա լավագույն ուսուցչին և դաստիարակին ՀՀ վարչապետը պարգևատրել է ավտոմեքենաներով: Մրցույթին մասնակից մյուս ուսուցիչները խրախուսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի «Ոսկե հուշամեդալով», պատվոգրերով և շնորհակալագրերով:
- «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», բնագիտական /«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն»/ առարկաների ուսուցիչների և դասվարների ամենամյա մրցույթի հանրապետական փուլին մասնակցել է 129 ուսուցիչ: Մրցույթի հանրապետական փուլում հաղթած ուսուցիչներին պարգևատրել են Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀՀ կրթության և գիտության նախարարը:

**Համագործակցություն միջազգային, տեղական և հասարակական կազմակերպությունների հետ**

Համագործակցություն է իրականացվել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ արտաքին գործերի նախարարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի, Համաշխարհային Բանկի Երևանյան գրասենյակի, «Փրկեք երեխաներին» կազմակերպության, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան, Ֆրանսիայի դեսպանատան, ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիայի, «Հայաստանի պատանեկան նվաճումների» և այլ կազմակերպությունների հետ:

**ՄԱՐԶԱՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել է «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ավագ դպրոցի 12-րդ դասարանի ծրագիրը:
- Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և ուսումը շարունակելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ:
- Համաձայն «Զենքի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության հետ համատեղ շարունակվել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնական ինքնաձիգի և ուսումնական փամփուշտների տրամադրումը /շուրջ 700 հանրակրթական ուսումնական հաստատություններում պատրաստվել են զենքի պահպանման սենյակներ, որոնք հագեցվել են անհրաժեշտ ուսումնական ավտոմատներով, նռնականետերով, ականներով, նռնակներով և զինամթերքով/:
- Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ անցկացվել է ամենամյա «Նախնական զինվորական պատրաստության» առարկայական օլիմպիադան, որին մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և ԼՂՀ թիմերը:
- Տարածքային զինկոմիսարիատներում անցկացվել են եռօրյա ուսումնամեթոդական պարապմունքներ, որոնց ընթացքում ՀՀ ՊՆ, ՀՀ ԱԻ, ՀՀ Ոստիկանության, ՀՀ ԿԳՆ և հանրապետական զինկոմիսարիատի ներկայացուցիչներն իրականացրել են հրահանգավորման աշխատանքներ:
- Մշակվել և սահմանված կարգով քննարկման են ներկայացվել «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ռազմաուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը» և «Սովորողների ռազմահայրենասիրական հայեցակարգը»:
- ՀՀ ՊՆ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է «Նախագորակոչային տարիքի երեխաների շրջանակներում

ռազմահայրենասիրական, սոցիալական և ընդհանուր իրավական իրազեկության վերաբերյալ» ծրագիրը:

- Ի կատարումն 01.10.2015 թվականի «ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2016 թվականի միջոցառումների իրականացման ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 44 արձանագրային որոշմամբ հաստատված Հավելված 2-ի 9.2 կետի պահանջների՝ 2016թ. ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բարձրագույն, նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում թմրամոլության կանխարգելման նպատակով իրականացվել են քարոզչական աշխատանքներ և միջոցառումներ՝ դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների և վնասակար այլ նյութերի շրջանառության կանխարգելման նպատակով:
- «ՀՀ-ում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության» ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բարձրագույն, նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են համապատասխան կրթադաստիարակչական աշխատանքներ:
- ՀՀ պաշտպանության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության համատեղ հրամանով հաստատված կարգի համաձայն՝ իրականացվել է «Տարվա լավագույն զինվորական ղեկավար», «Տարվա լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը:
- ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ մշակույթի նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարության առընթեր ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ կազմակերպվել է «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով գիտագործնական համաժողովը:

- ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 754-Ն հրամանով հաստատվել են ՀՀ երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով կազմակերպվել են հրաձգության, գնդակային հրաձգության, նետաձգության հանրապետական մրցումներ:
- 2016 թվականի հուլիսի 11-18-ը Թուրքիայի Տրապիզոն քաղաքում կայացել է դպրոցականների 16-րդ համաշխարհային Գիմնազիադան, որին մասնակցել է 30 երկրի 2500 դպրոցական: Հայաստանի Հարապետության պատվիրակությունը, որը կազմված էր 38 մասնակցից, հանդես է եկել 9-ը մարզաձևերում՝ ատլետիկա, մարմնամարզություն, լող, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտ, ձյուդո, նետաձգություն, շախմատ և սուսերամարտ: Հայաստանի դպրոցական մարզիկները 16-րդ համաշխարհային Գիմնազիադայում արժանացել են 5 ոսկե, 2 արծաթե և 8 բրոնզե մեդալների՝ թիմային հաշվարկով զբաղեցնելով 10-րդ հորիզոնականը:
- Տարվա ընթացքում անցկացվել են՝
  - Սենյակային թռչող «Գերթեթև» և «Ազատ թռչող» մոդելների գծով հանրապետական մրցումներ, որոնց մասնակցել է 80 դպրոցական:
  - ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերը, որոնց մասնակցել է շուրջ 62.772 դպրոցական:
  - ՀՀ «Ազգային Ժողովի» գավաթի խաղարկության 2016թ. մրցումները, որոնց մասնակցել են 1-6-րդ դասարանների աշակերտները, ընդհանուր թվով՝ 160 000 դպրոցական:
  - ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների 17-րդ հանրապետական մարզական խաղերը, որոնց մասնակցել է 20 բուհերի շուրջ 2000 ուսանող:
  - Մարզատուրիստական հանրապետական խաղեր ՀՀ Լոռու մարզի Գարգառ գյուղում, որոնց մասնակցել է 210 դպրոցական:
  - ՀՀ և Արցախի անկախության 25-ամյակին նվիրված 11-րդ մանկապատանեկան փողային նվագախմբերի փառատոնը, որին մասնակցել է 578 դպրոցական:

-Մանկապատանեկան մարզադպրոցների միջև խաղային հինգ մարզաձևերի ՀՀ առաջնություն, որոնց մասնակցել է 711 դպրոցական:

-Ժողովրդական գործիքների անսամբլների հանրապետական առաջին մրցույթ-փառատոնը:

- Լեհաստանում «Տոնիկա» ժողովրդական գործիքների անսամբլը մասնակցել է մրցույթ-փառատոնի՝ արժանանալով 1 ոսկե մեդալի և 1-ին կարգի դիպլոմի:
- Լեհաստանի Լոձ քաղաքում անցկացված «Աշխարհի ժողովուրդների արդարամիտները» խորագրով արվեստի միջմշակութային միջազգային մրցույթին ներկայացվել են գեղանկարչության և խեցեգործության խմբակների 6 սանի աշխատանքներ:
- Չեխիայի Հանրապետության Լիդիցե քաղաքում կազմակերպված «Դպրոցը և կրթությունը» թեմայով կերպարվեստի 44-րդ միջազգային մանկական ցուցահանդեսին՝ նվիրված ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրման 70-րդ ամյակին, ներկայացվել են գեղանկարչության և խեցեգործության խմբակների 11 աշխատանքներ:
- Տոկիոյում 7-15 տարեկան երեխաների համար անցկացվող «Կապույտ երկիր ո՞ւմ համար» թեմայով մանկական 17-րդ միջազգային բնապահպանական նկարչական մրցույթին ներկայացվել է 20 սանի 21 աշխատանք:
- Ռուսաստանի Դաշնությունում «Կովկասը պտավոր կատվի տուն» խորագրով մանկական նկարչական միջազգային մրցույթին ներկայացվել են գեղանկարչության խմբակի 16 սանի 16 աշխատանքներ:
- ՌԴ Ինֆորմացիոն Տեխնոլոգիաների կամավոր սերտիֆիկացիայի համակարգի կողմից իրականացվող հայտնի ոսկերիչ Կ. Ֆաբերժեի ծննդյան 170-ամյակին նվիրված «Ոսկերիչ» խորագրով կիրառական արվեստի միջազգային մանկապատանեկան մրցույթին ներկայացվել է 28 սանի 28 աշխատանք: Արդյունքում 27 աշխատանք արժանացել է պատվոգրերերի:
- ԼՂՀ-ի Բերծոր քաղաքում ստեղծվել է փողային նվագախումբ՝ սահմանամերձ բնակավայրերում փողային նվագախմբերի թիվը հասցնելով 11-ի:
- Ռոբոտաշինության խմբակի «Android» թիմի սաները մասնակցել են «Ական փնտրող ռոբոտներ» հանրապետական մրցույթին, որի արդյունքում սաների կողմից



նախագծած և պատրաստած ռոբոտը զբաղեցրել է 2-րդ պատվավոր տեղը: Կենտրոնի «Android» թիմը պարգևատրվել է հավաստագրով և մրցանակով:

- ՀՀ Շիրակի մարզում կազմակերպվել է ««Ընտանիքն անիվների վրա» կրթական ծրագիրը, որի նպատակն էր ՀՀ համայնքների և Ջավախքի մանկավարժների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, դեռահասների համար՝ ազգային արհեստների և արվեստի «Մասնագիտական կողմնորոշման» դասեր, կարևորել արտադպրոցական կրթության դերը և այլն:

## **ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՎԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- Վերանայվել է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) մասնագիտությունների ցանկը՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի պահանջներին, Որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագիտական դասակարգիչներին:
- ՀՀ ԿԳ նախարարի 2015թ. մարտի 27-ի «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 203-Ն և մայիսի 11-ի «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 419-Ա/Ք հրամանների համաձայն՝ 2016 թվականին անցկացվել են պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննություններ: Քննություններին մասնակցել է 68 շրջանավարտ, որոնցից 46-ը ստացել է պետական նմուշի դիպլոմ:
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում 2016/2017 ուսումնական տարվա ընդունելությունը կազմակերպելու նպատակով

մշակվել և հաստատվել է 2016 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ) 2016/2017 ուսումնական տարվա ընդունելության տեղերն հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 692-Ն որոշումը, համաձայն որի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հատկացվել են 2016/2017 ուսումնական տարվա ընդունելության տեղեր նախարարության ենթակայությամբ գործող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին: Ընդունելության արդյունքում առկա ուսուցման ձևով՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ընդունվել են շուրջ 3850 ուսանող, միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ շուրջ 7700 ուսանող:

- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հատկացվել են 2016/2017 ուսումնական տարվա ընդունելության հեռակա ուսուցմամբ տեղեր՝ նախարարության ենթակայությամբ գործող միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին: Ընդունվել է շուրջ 250 ուսանող:
- ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի թիվ 589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 752-Ն որոշման համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվել են «Բարձրագույն ուսումնական հաստատությունների, նրանցում ուսուցանվող մասնագիտությունների և տեղերի, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը և միջին

մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների և այդ հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների ցանկերը»:

- Փոփոխություններ են կատարվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 254-Ն հրամանում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարի մայիսի 26-ի թիվ 552-Ա/2 հրամանով հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստումներ իրականացնելու համար երաշխավորված կազմակերպությունների կողմից իրականացվել են տնօրենների և հավակնորդների թեկնածուների վերապատրաստումներ: ՀՀ կրթության և գիտության նախարարի հուլիսի 20-ի թիվ 519-Ա հրամանով հաստատվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրված անձանց ցուցակը: Հավաստագրմանը մասնակցել է 30 անձ, որոնք ստացել են ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):
- Ազգային որակավորումներն առավել թափանցիկ և պատկերավոր, եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների հետ համադրելի դարձնելու, ինպես նաև շնորհվող որակավորումների ճանաչելիությունն ապահովելու և շարժունությունն ընդլայնելու նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի թիվ 714-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» թիվ 332-Ն որոշման մեջ:
- Մշակվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի հուլիսի 25-ի թիվ 761-Ա/2 հրամանով հաստատվել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական

չափորոշիչների պարբերական վերանայման ցանկերի ձևավորման և վերանայման աշխատանքային խմբերի փորձագետների ընտրության ընթացակարգը»:

- Վերջին տարիներին մշակվել են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական 170 չափորոշիչներ (որոնցից 12-ը՝ 2016 թվականին), համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր: Մշակված չափորոշիչները անցել են փորձաքննություն ոլորտային հանձնաժողովներում և հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից: Պետական կրթական 160 չափորոշիչներ արդեն իսկ ներդրվել են ուսումնական հաստատություններում, իսկ 12-ը կներդրվեն 2017-2018 ուսումնական տարվանից:
- 2016թ. վերանայվել են նախկինում մշակված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 20 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր՝ սոցիալական գործընկերների ներգրավմամբ:
- Լոռու տարածաշրջանային և Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջներում (2-րդ կուրսերում) ավարտվել է «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրեդիտային համակարգի կազմակերպման փորձարկման գործընթացը:
- 2016 թվականի ընթացքում մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում վերապատրաստվել են՝
  - 75 ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների 145 տնօրեններ, փոխտնօրեններ, վարչական աշխատողներ՝ 7 խմբերով, որոնցից 4-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ ՀՀ Սյունիքի, ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերում:
  - ՄԿՈՒ հաստատությունների թվով 934 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ վերապատրաստում:
  - կառավարման խորհրդի թվով 41 անդամներ:

- Կարևորելով աշխատաշուկա-կրթական համակարգ փոխադարձ կապի ապահովումը՝ շարունակվել են հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները: Պարբերաբար կազմակերպվել են աշխատաժողովներ՝ նպատակաուղղված Հայաստանում կարիերայի ուղղորդման ծառայությունների արդիականացմանն ու բարելավման, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանում կարիերայի կողմնորոշման ձեռքբերումներն ու մարտահրավերները:
- Dasar.am կայքէջում ստեղծվել և գործում է նախնական և միջին մասնագիտական կրթության տեղեկատվական հարթակը:
- Պատրաստվել և տպագրվել են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագրի 2016 թվականի համարները:
- Ոլորտում իրականացվող բարեփոխումներին զգալի աջակցություն է ցուցաբերվել ինչպես պետական բյուջեից, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը, համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ, նախաձեռնել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Մասնագիտական կրթություն և զբաղվածություն հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար» 2016-2017թթ. ծրագրի իրականացումը, որի նպատակն է նպաստել Հայաստանի նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական ոլորտում սոցիալական նորարարությունների ներմուծմանը, խթանել հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար աշխատանքի հավասար հնարավորությունների ստեղծումը: Ծրագրին մասնակցում են ՄԿՈՒ 7 հաստատություններ՝ Երևանից, ՀՀ Վայոց ձորի, Կոտայքի, Տավուշի, Սյունիքի, Արմավիրի մարզերից:
- 2014-2016 թվականների ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երաշխավորությամբ «Հույսի կամուրջ» ՀԿ-ն Ուսուցման ազգային հիմնադրամի մեթոդական խորհրդատվությամբ և մասնակցությամբ իրականացրել է «Արժանապատիվ կյանքի իրավունք» ծրագիրը: Ծրագրի նպատակն է խթանել հաշմանդամություն ունեցող երիտասարդների կրթության և աշխատանքի իրավունքի իրացմանը ՀՀ Տավուշի մարզում: Ծրագրի շրջանակներում Տավուշի

մարզի ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների 70 դասավանդող վերապատրաստվել և կատարելագործել է ներառական կրթություն իրականացնելու հմտությունները, 50 քիզնես ոլորտի մասնագետ և ՄԿՈՒ դասավանդող վերապատրաստվել և ձեռք են բերել հաշմանդամություն ունեցող անձանց հետ մասնագիտական ուսուցում (կարճաժամկետ դասընթացներ) իրականացնելու մեթոդական հմտություններ, այնուհետև վերջիններս անցկացրել են 120 երիտասարդի մասնագիտական ուսուցում՝ 8 մասնագիտությունների գծով:

- 2016 թվականի մայիսի 27-28-ը անցկացվել է «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթը՝ «Խոհարարություն», «Ոսկերչություն» և «Նորածնության տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով: «Հայաստանի հմտություններ» ազգային մրցույթի հաղթողները կմասնակցեն 2017 թվականին Միացյալ Արաբական Էմիրություններում՝ Աբու Դաբիիում, կայանալիք «Աշխարհի Հմտություններ» 44-րդ միջազգային մրցույթին:
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության ֆինանսավորմամբ «Գերմանական միջազգային համագործակցություն» ընկերությունը (GIZ) 2014-2017 թթ.-ին իրականացնում է «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում մշակվել և իրականացվել է «Վարպետաց դասընթացներ ՄԿՈՒ ոլորտում՝ Հարավկովկասյան երեք երկրների համար» առաջնորդների միջազգային վերապատրաստման 6-ամսյա գործնական դասընթացը, որի նպատակն է բարելավել մասնագիտական կարողությունները, գիտելիքներն ու հմտությունները՝ տեխնիկական մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՏԿԿ) ոլորտի մասնագետների դասավանդման, կառավարման և վարչարարական հետազա պարտականությունների իրականացման համար: Մասնակցության արդյունքում, որպես ավարտական աշխատանք, մշակվել են ՄԿՈՒ հաստատությունների զարգացմանն ուղղված անցումային նախագծեր, որոնց ներդանը կաջակցի նաև «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագիրը:
- 2016թ. գարնանը մեկնարկել է «Ձեռնարկատիրական հմտություններ» մոդուլի փորձարկման գործընթացը՝ ընտրված 4 ՄԿՈՒ ուսումնական

հաստատություններում: Մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» չափորոշիչի և մոդուլային ծրագրի նախագիծը:

- ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի հետ համատեղ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի տեխնիկական աջակցությամբ և Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության (BMZ) ֆինանսավորմամբ իրականացվել է ծրագիր, որի նպատակն է մասնավոր հատվածի անմիջական մասնակցությամբ ստեղծել ոլորտային հմտությունների զարգացման կենտրոններ (ՈՀԶԿ) զբոսաշրջության և սննդի ու խմիչքների արտադրության ոլորտներում:
- Սկոլկովոյի Կրթության մշակման կենտրոնի և Աշխատանքի միջազգային կազմակերպության համագործակցության ծրագրի շրջանակներում 2016 թվականի ընթացքում «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոց» ոչ պետական ուսումնական հաստատության կողմից մշակված «Managing TVET Institution» համակարգչային գործիքի միջոցով Հայաստանում իրականացվել է վերապատրաստում՝ ուղղված ՄԿՈՒ հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը, որին մասնակցել են Երևանի և ՀՀ մարզերի շուրջ 65 նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրեններ և ադմինիստրատիվ օղակի աշխատակիցներ:
- «Թուրինյան Գործընթաց-2016» համագործակցության շրջանակներում մշակվել է ՄԿՈՒ ոլորտում վերջին 2-3 տարվա ընթացքում իրականացված բարեփոխումների վերաբերյալ ամփոփիչ զեկույց, որը ներկայացվել է Թբիլիսիում կայացած «Թուրինյան Գործընթաց 2016» տարածաշրջանային համաժողովին:
- «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն շվեյցարական գործընկերներ HEKS/EPER (Շվեյցարիայի եկեղեցու օգնության) և Կիրառական գիտությունների Բեռնի համալսարանի գյուղատնտեսության, անտառային և պարենային գիտությունների դպրոց (HAFL) կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական

կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտում նոր՝ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում Սյունիքի մարզում» խորագրով ծրագիրը: Ծրագրի նպատակն է նպաստել գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և խորհրդատվության ծառայությունների զարգացմանը և հասանելի դարձնել շուկային միտված գործնական կրթությունը անասնաբուժության, կաթի վերամշակման և ֆերմերներին խորհրդատվական ծառայությունների մատուցման ոլորտներում: Ծրագիրը մեկնարկել է 2016 թվականին և կավարտվի 2020 թվականին:

- ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների» միության և SS մի շարք առաջատար ընկերությունների համագործակցության շրջանակներում մշակվել է քառամյա փորձնական կրթական ծրագիր՝ «Համակարգերի տեսություն» ուղղությամբ, որը փորձնական ներդրվել է «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում:
- «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամը շարունակում է Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթօջախների համապարփակ և հարատև զարգացման ծրագիրը: Հիմնադրամի ֆինանսավորմամբ և աջակցությամբ շարունակվում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների հիմնումը Հայաստանի Հանրապետության մարզերի 7 արհեստագործական ուսումնարաններում: Համապատասխան սարքերի տեղադրման աշխատանքները բոլոր 7 ՆՄԿՈՒ հաստատություններում արդեն իսկ ավարտվել են. սարքերը տեղադրվել են Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջներում, Արարատի պետական քոլեջում, Վանաձորի Ս. Թևոսյանի անվան պետական պոլիտեխնիկական քոլեջում, Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջում և Հրազդանի արհեստագործական ուսումնարանում:
- Եվրոպական հանձնաժողովը ՀՀ կառավարության հետ միասին դիտարկում է Հայաստանին գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման միջոցով աշխատաշուկայի արդյունավետությունը և ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությունը բարձրացնելու համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հնարավորությունը: «Ավելի լավ որակավորում ավելի



լավ աշխատանքի համար» ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի իրականացման մասին համաձայնագրի ստորագրումը ՀՀ կառավարության և Եվրոպական Միության միջև նախատեսվում է 2017 թվականին:

### **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- Նկատի ունենալով ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի (համապատասխան որակավորումների) հետ կապված խնդրի կարգավորման և իրավունքների ապահովման անհրաժեշտությունը՝ 2016 թվականին կազմակերպվել են բակալավրի կրթական աստիճանի ամփոփիչ ատեստավորման քննություններ, որի արդյունքում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների 189 շրջանավարտներից բակալավրի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնել է 136-ը /71.9%/: ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանի համաձայն՝ տվյալ մասնագիտության համար նախատեսված բոլոր ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտների ոչ պետական նմուշի նախկին դիպլոմը փոխարինվելու է համապատասխան մասնագիտության և որակավորման բակալավրի պետական նմուշի դիպլոմով:
- «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական տարբերակը շահագրգիռ գերատեսչություններից ստացված առկա առաջարկությունների ու դիտողությունների հաշվառմամբ նոյեմբեր ամսին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական և հակակոռուպցիոն բնագավառի ազդեցության գնահատման եզրակացությունների ամփոփումից հետո (նկատի ունենալով նաև ներկայումս ամփոփված, սակայն մինչ ՀՀ կառավարություն ուղարկելը կարծիք չներկայացրած գերատեսչությունների առաջարկները ևս) օրենքի նախագիծը լրացուցիչ կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ: «Բարձրագույն կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է բարձրագույն կրթության զարգացմամբ և միջազգայնացմանն ուղղված միտումներով, ինչպես

նաև՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ինտեգրմամբ: Այն ներառում և պայմանավորված է բարձրագույն կրթության բնագավառում կրթության կազմակերպման, իրավակազմակերպական, ֆինանսական հարաբերությունների հստակեցման, անկախ բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևից ու կարգավիճակից նրանց ակադեմիական, կառավարման, ֆինանսական հարաբերությունների ընդհանուր սկզբունքների, պայմանների և պահանջների հստակ սահմանման և ապահովման, ինչպես նաև՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում առկա հակասությունների կարգավորման անհրաժեշտությամբ:

- ՀՀ կառավարության կողմից հաստատված նոր մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխան հաստատվել է ՀՀ բուհերի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով 2017/2018 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը, որի հիման վրա իրականացվում է ՀՀ բուհերում ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի ընդունելության գործընթացը՝ պայմանավորված հանրապետության տնտեսության, գիտության զարգացման կարիքներին համապատասխան և պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում համապատասխան մասնագետների պատրաստման անհրաժեշտությամբ:
- Կարևորելով ապրիլյան պատերազմի մասնակիցների ընտանիքների սոցիալական բեռի որոշակի թեթևացման անհրաժեշտությունը՝ ՀՀ բուհերի ռեկտորներին հանձնարարվել է ապրիլյան պատերազմի մասնակից ուսանողների համար (նաև առաջին կուրսի առաջին կիսամյակում) կատարել ուսման վարձի առավելագույն զեղչ (առնվազն 50 տոկոս)՝ առանց հաշվի առնելու ուսանողի ՄՈԳ-ը:
- Միջազգային չափանիշների համապատասխան՝ 2011 թվականից մեկնարկել է ՀՀ բուհերի հավատարմագրման գործընթացը: Հայաստանում Ամերիկյան համալսարանը, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանը անցել են միջազգային հավատարմագրում: Հարկ է նշել, որ Ճարտարապետության և

շինարարության հայաստանի ազգային համալսարան հիմնադրամն անցել է որակի միջազգային հավատարմագրում Ֆրանսիայի բարձրագույն կրթության և հետազոտության գնահատման (HCERES) և Իսպանիայի որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալության /AERES/ կողմից: ՀՀ 13 պետական և 4 մասնավոր բուհեր անցել են ինստիտուցիոնալ և պայմանագրային ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից:

- 2015 թվականին մեկնարկել է «Կրթության բարելավում» նոր դրամաշնորհային մրցակցային ծրագիրը՝ ուղղված բարձրագույն ուսումնական հաստատություններում նորարարական ու զարգացման ծրագրերի իրականացմանը և բուհերի կարողությունների հզորացմանը: 2016թ. Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում նորարարական ծրագրեր են իրականացվել 6 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ միասին (ՀԱՊՀ, ԵՊԲՀ, ՀԱԱՀ, ՀՀ ՊԿԱ, ՃՇՀԱՀ, ԵՊՀ)՝ 2015թ. դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրերի համաձայն: Վերոհիշյալ ծրագրերի իրականացումը կավարտվի 2017թ. դեկտեմբերին:
- Erasmus+ ծրագրի Կարողությունների զարգացման գործողության ներքո 2016 թվականի առաջարկների մրցույթի արդյունքներով (ՀՀ բուհերի ներգրավվածությամբ) հաղթել են վեց ծրագրեր, որոնցից երեքի համակարգողը հանդիսանում են ՀՀ բուհերը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան և Հայաստանում Ֆրանսիական համալսարանը:
- Եվրոպայի Միության և Եվրոպայի Խորհրդի Արևելյան համագործակցության երկրների համար 2015-2017թթ. Գործընկերության և համագործակցության շրջանակի ներքո ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ իրականացվել է «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարելավրթության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» երկամյա ծրագիրը:
- Շարունակվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից միջբուհական պայմանագրերով իրականացվող՝ ընդհանուր կրթական չափորոշիչների հիման վրա համատեղ ծրագրերի ընդլայնումը: ԵՄ աջակցությամբ

բուհերում իրականացվել են ուսանողների փոխանակման և համատեղ կրթական ծրագրեր, ինչպես նաև կրթական ծրագրերի վերանայում՝ ըստ կրթական վերջնարդյունքների:

- Հետբուհական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունից ելնելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի թիվ 238-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման» կարգը, որի ընդունմամբ կանոնակարգվել է հետբուհական կրթության համադրելիությունը Բոլոնիայի պահանջներին և Ջալքբուրգյան սկզբունքներին:
- ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 714-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը», որի ընդունմամբ հստակեցվել են ՈԱՇ-ում դասակարգված մակարդակները և դրանց ընդհանրական բնութագրերը: Շնորհիվոլ ազգային որակավորումները համադրելի կլինեն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումներին, ինչպես նաև կապահովվեն շնորհիվոլ որակավորումների ճանաչելիությունը և կրնդլայնվի շարժունությունը:
- 2016 թվականին իրականացվել է ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման գործընթացը՝ ըստ յոթ ոլորտների (բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (S<S), բժշկություն, հումանիտար գիտություններ, հասարակագիտություն, ճարտարագիտություն (այդ թվում՝ ճարտարապետական /գյուղատնտեսական), մշակույթ-սպորտ, հայագիտություն): Մրցույթի նպատակն է՝ բուհերի ուսանողների միջև խթանել մրցակցությունը, խրախուսել այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն, ունեն նշանակալի ձեռքբերումներ գիտահետազոտական, ստեղծագործական և սպորտի ոլորտներում, ինչպես նաև ակտիվ գործունեություն են ծավալում ուսանողական ինքնակառավարման,

հասարակական կյանքի ոլորտներից որևէ մեկում: Վերոնշյալ յոթ ոլորտներով՝ ըստ կրթական ծրագրերի /բակալավր, մագիստրոս/, առկա է 37 մրցանակային տեղ, որոնց համար նախատեսված է շուրջ 12 մլն դրամ խրախուսական գումար:

- Շարունակվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպության» կարգավիճակ ունեցող ՀՀ պետական բուհերի «Հիմնադրամի» վերակազմակերպման հարցը: Ներկայումս 16 պետական բուհերից 10-ն ունեն «Հիմնադրամի» կարգավիճակ:
- Հիմք ընդունելով վարկանիշավորման համակարգի միջազգային փորձը 2016 թվականին փոփոխություններ են կատարվել վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունում. Արդյունքում՝ ՀՀ բուհերի հետ միասին լրամշակվել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների միասնական ցանկով վարկանիշավորման ազգային համակարգը: Նախատեսվում է ազգային վարկանիշավորման գործընթացի վերաբերյալ ամփոփ արդյունքները ներկայացնել հանրությանը 2017 թվականի հունվար ամսին:
- Համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի պահանջների՝ պետության կողմից շարունակվել է իրականացվել սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցում՝ 50-100%-ի չափով: 2016 թվականին բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճանում սովորող 1136 առաջին կուրսեցիների պետության կողմից հատկացվել է ուսման վարձավճարի 50-100% չափով փոխհատուցում, որը կազմել է 280.764.700 դրամ: Հատկանշական է, որ 2014/2015 ուսումնական տարվա համեմատությամբ տեղի է ունեցել ուսման վարձի փոխհատուցման էական աճ, գումարային տեսքով, եթե 2014/2015 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում (2-րդից 4-րդ կուրս) փոխհատուցվել էր **1030** ուսանողի ուսման վարձը՝ **223.800.800** դրամի չափով, ապա 2015/2016 ուսումնական տարում, նույն կրթական աստիճանում ընդրկվել է **1379** ուսանող՝ **306.941.920** դրամ ուսման վարձի փոխհատուցման չափով: 2014/2015 ուսումնական տարում մագիստրոսի կրթական աստիճանում փոխհատուցվել է **40** ուսանողի ուսման վարձը, 2015/2016 ուսումնական տարում փոխհատուցվել է **52** ուսանողների ուսման վարձը:

- 2016 թվականին շարունակվել է համագործակցությունը «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի հետ: Մասնավորապես, ՀՀ ԿԳՆ-ն պատվիրել է իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն՝ «ՀՀ ուսանողների կենսաոճի, սոցիալ-տնտեսական կարիքների և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն» թեմայով, որի արդյունքները ներկայացվել է հոկտեմբեր ամսին:

### **ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- Միջկառավարական, միջգերատեսչական համաձայնագրերի, գործնական ծրագրերի, և հուշագրերի մշակման, քննարկման և ստորագրման նախապատրաստական աշխատանքների իրականացման արդյունքում 2016 թվականի ընթացքում ստորագրվել են ներքոնշյալ փաստաթղթերը.
  - Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի Հունաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում մարտ 15-ին ստորագրվել է «ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև 2016-2020թթ. կրթության և հետազոտությունների բնագավառում համագործակցության մասին ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Կիպրոսի Հանրապետության կրթության և մշակույթի նախարարության միջև կրթության և գիտության բնագավառում 2016-2020թթ. համագործակցության մասին գործնական ծրագիրը» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև երկու երկրների բուհերում ուսումը սկսելու և շարունակելու նպատակով բարձրագույն ուսումնական որակավորումների փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիրը»:
  - 2016 թվականի ապրիլի 1-ին Երևանում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հնդկաստանի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների դեպարտամենտի միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» արձանագրությունը:

- 2016 թվականի ապրիլի 6-ին ստորագրվել է «Չինաստանի աջակցությամբ Հայաստանում չինական դպրոցի շինարարության նախագծի» իրականացման մասին համաձայնագիրը :
- 2016 թվականի ապրիլի 13-ին ստորագրվել է «Եվրասիական տարածքում կրթական և գիտա-նորարական համագործակցության հարցերի մասին» հուշագիրը;
- 2016 թվականի մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ «Հորիզոն-2020՝ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը:
- 2016 թվականի հունիսի 20-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:
- 2016 թվականի հուլիսի 20-ին ստորագրվել է «ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության միջև համատեղ գիտահետազոտական և համալսարանական ծրագրերի իրականացման մասին» փոխըմբռնման հուշագիրը:
- 2016 թվականի օգոստոսի 12-ին Բրազիլիա քաղաքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Կառավարության միջև կրթության ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը:
- 2016 թվականի հոկտեմբերի 13-ին «ՀՀ կրթության և գիտության նախարարության և Շեֆֆիլդ համալսարանի միջազգային ֆակուլտետ Սիթի քոլեջի միջև» փոխըմբռնման հուշագիրը:
- 2016 թվականի հոկտեմբերի 26-ին ստորագրվել է «ՀՀ կրթության և գիտության նախարարության և Իտալիայի Հանրապետության կրթության, համալսարանների և հետազոտությունների նախարարության միջև կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

- 2016 թվականի նոյեմբերի 16-ին «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Մոլդովայի Հանրապետության Կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

- Կազմակերպվել է օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջազգային պայմանագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթների գործընթացը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1205-Ն հրամանով հաստատված «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը հատկացված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, ասպիրանտուրայի (ինտերնատուրա, օրդինատուրա) և դոկտորանտուրայի կրթական ծրագրերով» կարգի պահանջներին համապատասխան: 2016-2017 ուսումնական տարվա համար հայտարարվել են մրցույթներ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Ռումինիայի, Բուլղարիայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Հորդանանի Հաշիմյան Թագավորության, Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու նպատակով: Արդյունքում՝ 2016 թվականին ՀՀ քաղաքացիները գործուղվել են՝

| <b>Երկիր</b>                          | <b>Բակալավրիայր</b> | <b>Մագիստրատուրա</b> | <b>Ասպիրանտուրա</b> | <b>Ընդամենը</b> |
|---------------------------------------|---------------------|----------------------|---------------------|-----------------|
| Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն | 11                  | 4                    | 5                   | <b>20</b>       |
| Ռումինիա                              | 3                   | 1                    |                     | <b>4</b>        |
| Բուլղարիայի Հանրապետություն           | 2                   | 2                    |                     | <b>4</b>        |
| Լեհաստանի                             | 2                   | 2                    | 2                   | <b>6</b>        |



|   |   |   |   |   |
|---|---|---|---|---|
| Հանրապետություն                         |   |   |   |   |
| Հորդանանի<br>Հաշիմյան<br>Թագավորություն | 1 | 2 | 1 | 4   |
| Վրաստան                                 |   | 8 |   | 8   |
|   |   |   |   | <b>46</b><br><b>ՀՀ</b><br><b>քաղաքացի</b> |

- Մինևույն ժամանակ կազմակերպվել և համակարգվել է միջազգային պայմանագրերի շրջանակներում ներկայացված օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության և կացության կարգավիճակի տրամադրման գործընթացը, որի արդյունքում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանում են.

| <b>Երկիր</b>                     | <b>Ընդամենը</b> |
|----------------------------------|-----------------|
| Ռուսաստանի Դաշնության            | <b>29</b>       |
| Հորդանանի Հաշիմյան Թագավորության | <b>21</b>       |
| Չինաստանի Ժողովրդական            | <b>8</b>        |
| Հանրապետության                   |                 |
| Վրաստան                          | <b>3</b>        |
| <b>օտարերկրյա քաղաքացի</b>       | <b>61</b>       |

- Սահմանված կարգով իրականացվել են կրթության և գիտության ոլորտում համագործակցության նպատակով պաշտոնական այցերով Հայաստանի Հանրապետություն ժամանած պաշտոնյաների և պատվիրակությունների

ընդունելությունը, ինչպես նաև կազմակերպվել է արտասահմանյան գործուղումների գործընթացը և արարողակարգը:

- Իրականացվել են 2016 թվականին Երևանում կազմակերպված Երեխաների սնուցման համաշխարհային 18-րդ համաժողովի և Հետազոտության, գիտության և նորարարության հարցերին նվիրված Արևելյան գործընկերության 8-րդ ոչ պաշտոնական նախարարական երկխոսության հանդիպմանը առնչվող աշխատանքներ:

### ՍՓՅՈՒՌԻ ՀԵՏ ԿԱՊԵՐ

#### Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստում

Հուլիսի 4-ից հուլիսի 29-ը Հայաստանում իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների մեկամսյա վերապատրաստում, որին մասնակցել է 65 ուսուցիչ՝ 17 երկրից: Վերապատրաստումն իրականացրել է ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտը:

| Հհ | Երկիր     | Թիվ |
|----|-----------|-----|
| 1  | ԱՄՆ       | 8   |
| 2  | Արգենտինա | 1   |
| 3  | Ավստրալիա | 1   |
| 4  | Բուլղարիա | 2   |
| 5  | Դանիա     | 1   |
| 6  | Էստոնիա   | 2   |
| 7  | Թուրքիա   | 15  |
| 8  | Լիբանան   | 5   |
| 9  | Ռուսաստան | 8   |
| 10 | Հորդանան  | 1   |
| 11 | Սիրիա     | 5   |
| 12 | Ուկրաինա  | 6   |
| 13 | Վրաստան   | 5   |

|                  |              |           |
|------------------|--------------|-----------|
| 15               | Ֆրանսիա      | 3         |
| 16               | Նիդերլանդներ | 1         |
| 17               | ԱՄԷ          | 1         |
| <b>Ընդամենը՝</b> |              | <b>65</b> |

Ուսուցիչների բաշխումը՝ ըստ խմբերի

| Հհ              | Երկիր                       | Թիվ       |
|-----------------|-----------------------------|-----------|
| Ա               | Մանկապարտեզ                 | 14        |
| Բ               | Մեկօրյա                     | 11        |
| Գ               | Տարրական                    | 14        |
| Դ               | Հայոց լեզու և գրականություն | 12        |
| Ե               | Դպրոցների կառավարում        | 7         |
| Զ               | Լրացուցիչ                   | 7         |
| <b>Ընդամենը</b> |                             | <b>65</b> |

**Սփյուռքի համար մանկավարժական և մասնագիտական կադրերի պատրաստում համալսարաններում և ասպիրանտուրայում**

2016թ. «Սփյուռքի համար մանկավարժական և մասնագիտական կադրերի պատրաստումը համալսարաններում և ասպիրանտուրայում» ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարություն է դիմել 24 երկրի 790 սփյուռքահայ, որոնցից 160-ը՝ սիրիահայեր:

**Օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն ՀՀ բուհեր**

2016թ. ՀՀ ուսումնական հաստատություններ է ընդունվել 23 երկրի 622 ազգությամբ ոչ հայ օտարերկրյա քաղաքացի:

**Համահայկական բնագիտական օլիմպիադա**

2016թ. անցկացվել է համահայկական բնագիտական օլիմպիադան, որին մասնակցել է շուրջ 100 մասնակից՝ 11 երկրից: Երեխաները մրցել են Ֆիզիկայի, Մաթեմատիկայի և

Հայաստանի աշխարհագրության ոլորտներում: Հաղթողներն արժանացել են դիպլոմների, ՀՀ ԿԳՆ պատվոգրերի և շնորհակալագրերի:

### **Համահայկական մանկապարտնեկան նկարչական մրցույթ-փառատոն**

2016թ. հայտարարվել էր մանրանկարչության թեմայով մրցույթ-փառատոնը, որի առաջին փուլում մասնակցել են 100-ից ավելի ուսումնական հաստատություններ՝ ներկայացնելով ավելի քան 1100 աշխատանք: Երկրորդ փուլի համար ընտրվել է 87 հաստատությունների շուրջ 180 աշխատանք: Մրցույթ-փառատոնը շարունակվում է:

## **ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ կրթության զարգացման 2017-2025թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ սահմանվել են կրթության զարգացման նպատակները, գերակայությունները և գործողությունների շրջանակը:
- Մշակվել և կազմվել են կրթության ոլորտի ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2017 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի նախագծերը:
- Հավաքագրվել և մշակվել են հանրակրթության, մասնագիտական կրթության և կրթության ֆինանսավորման 2014-2015 ուսումնական տարվա վիճակագրական ցուցանիշները, որոնք ժամանակին ներկայացվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտ:
- Վարչությունը համակարգել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացման աշխատանքները: 2016 թվականին ՀՀ Վայոց ձորի, Սյունիքի և Արարատի մարզերի բոլոր հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին տրամադրվել է դպրոցական նախաճաշ՝ յուրաքանչյուր երեխային օրական 140 դրամ հաշվարկով: Ծրագրում ընդգրկված են 23014 աշակերտներ, որից 2436-ը՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, 6089-ը՝ ՀՀ Սյունիքի մարզ, 14489-ը՝ ՀՀ Արարատի մարզ:
- 2016 թվականին Պարենի Համաաշխարհային Ծրագրի և Երեխաների սնուցման համաաշխարհային հիմնադրամի աջակցությամբ Հայաստանում կազմակերպվել է

Երեխաների սնուցման 18-րդ ամենամյա համաշխարհային ֆորումը, որի նպատակն էր նպաստել համագործակցության խորացմանն ու սերտացմանը, ինչպես նաև «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագրի հետագա ընդլայնմանն ու զարգացմանը:

- Վարչությունը համակարգել է կրթության բնագավառում խտրականության դեմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1960թ. Կոնվենցիայի դրույթների կիրարկման վերաբերյալ ՀՀ 2012-2015թթ. ազգային զեկույցի պատրաստման աշխատանքները:
- Կազմակերպվել են կրթության ոլորտում իրականացվող պետական ռազմավարական ծրագրերի մշակման և մոնիթորինգի աշխատանքները, մասնավորապես՝
  - ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի կատարողականի հաշվետվության պատրաստում,
  - ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագիր և գերակա խնդիրներ,
  - կրթության և գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2015-2018 թվականների միջոցառումների համալիր ծրագիր,
  - ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի կազմում և կրթության ոլորտի գերակա խնդիրների սահմանում,
  - ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի կրթության ոլորտի 2016թ. միջոցառումների ծրագիր,
  - ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017թթ. ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների ծրագիր,
  - Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2016թ. տարեկան ծրագրի կրթության ոլորտի միջոցառումներ,
  - ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության իրականացումն ապահովող կրթության ոլորտի 2016թ. միջոցառումներ:

## **ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքից բխող աշխատանքներ.
  - «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխությունները՝ կազմվել են պաշտոնի անձնագրեր:
  - Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում և համակարգում՝ թվով 45 հոգի.
  - Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների ատեստավորման կազմակերպում և համակարգում՝ թվով 55 հոգի.
  - Նախարարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների մրցույթներ՝ թվով մոտ 15 մրցույթ:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) ընդհանուր կարգերը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 224-Ն որոշումից բխող աշխատանքներ: Նախարարության համակարգում ընդգրկված ՊՈԱԿ-ների (բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործադիր մարմինների (ռեկտորների և տնօրենների) թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում և անցկացում՝ թվով թվով 2 ռեկտորի մրցույթ և 15 տնօրենի մրցույթ.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշումից բխող աշխատանքներ՝
  - Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ քննությանը մասնակցելու համար 2016թ. դիմել է 773 հավակնորդ, որոնցից 559-ին շնորհվել է հավաստագիր:

○ 10.01.2016թ. առ այսօր ընտրվել և նշանակվել են 24 հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ և նրանց հետ կնքվել են աշխատանքային պայմանագրեր:

- Նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ քննությանը մասնակցել է 30 հավակնորդ: 30-ին էլ շնորհվել է հավաստագիր:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1412-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ մանկավարժական կադրեր գործուղելու կարգ»-ի համաձայն գործուղվել է 22 ուսուցիչ:

#### **ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

- Լուսաբանվել են ԿԳ նախարարի այցերը ՀՀ մարզեր /հեռուստատեսություն, կայքեր, ռադիո/:
- «Голос Армении» թերթի «За партой» խորագրի շրջանակում 2014 թվականին հրապարակվել է 12 նյութ:
- Վարչության կողմից ամենօրյա մշտադիտարկման է ենթարկվել 30 էլեկտրոնային կայք, 14 թերթ, 14 հեռուստառադիոընկերություն:
- Կրթության և գիտության ոլորտի վերաբերյալ հրապարակվել է 4378 նյութ, որից 382-ը՝ տպագիր մամուլում, 420-ը՝ հեռուստառադիո թողարկումներում, 3576-ը՝ էլեկտրոնային կայքերում:
- Նախարարության պաշտոնական կայքում զետեղվել են նախարարության գործունեությանն առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող շուրջ 130 հայտարարություն, 350 լրատվական նյութ:
- Կազմակերպվել են ԿԳ նախարարի և նախարարի տեղակալների, վարչության պետերի մամուլի ասուլիսներ, որոնք լուսաբանվել են հանրապետական

հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական մամուլում:

- Հանրային քննարկման է դրվել 2 իրավական ակտի նախագիծ:
- Կազմակերպվել է ավելի քան 100 հանրային միջոցառում, որոնք լուսաբանվել են հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների կողմից, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետական, էլեկտրոնային և տպագիր մամուլում:
- Նախարարության «Թեժ գիծ» հեռախոսակապով ընդունվել է 180 ահազանգ, որից 111-ը՝ Երևանից, 69-ը՝ մարզերից: Բոլոր ահազանգերը համապատասխան ընթացք են ստացել ինչպես նախարարության հանրակրթության վարչության, այնպես էլ կրթության պետական տեսչության կողմից:
- Պատասխան է տրվել քաղաքացիների կողմից էլեկտրոնային փոստով ստացված ավելի քան 250 նամակի:
- ԿԳ նախարարի մոտ կազմակերպվել է քաղաքացիների 6 ընդունելություն, որոնց ընթացքում նախարարն ընդունել է 73 քաղաքացու:

### **ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Վարչությունն ապահովել է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով հաստատված թվով 73 ծրագրերի ֆինանսական գործառույթների իրականացումը, որոնք իրենց մեջ ներառում են տարեկան ժամանակացույցերի կազմում, մուտքագրում և հաստատում, համապատասխան պայմանագրերի կնքում, քաղվածք-պայմանագրերի կազմում և էլեկտրոնային առաքում, ամենամսյա հայտերի, հավաստագրերի և ֆինանսական պարտավորությունների կազմում և էլեկտրոնային առաքում:

- Օրենքով սահմանված կարգով շուրջ 400 կազմակերպությունների հետ /այդ թվում ենթակա 258/ կնքվել են 800-ից ավելի պայմանագրեր, պատշաճ ձևով և ժամանակին ապահովելով նրանց ֆինանսավորումը, ֆինանսավորվող կազմակերպություններից ընդունվել ամփոփվել և սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն եռամսյակային և տարեկան հաշվետվություններ: Համապատասխան իրավական ակտերի առկայության



դեպքում իրականացվել են ներհանրապետական և արտասահմանյան գործուղումների ծախսերի հաշվարկներ և վճարումներ:

- Իրականացվել է սոցիալական փաթեթի սպասարկման աշխատանքների վերահսկում, ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության կազմակերպություններից հաշվետվությունների ընդունում և ամփոփում, նախարարության աշխատակազմի էլեկտրոնային շտեմարանների բազայի ձևավորում, հաշվապահական ձևակերպումներ և գլխավոր գրքի լրացում: Իրականացվել է նախարարության հաշվապահական հաշվառումը, այդ թվում ապրանքանյութական արժեքների բաշխման փաստաթղթերի կազմումը և հաշվառումը:
- Վարչությունը մշակել և ՀՀ կառավարություն հաստատման է ներկայացրել թվով 20 ՀՀ կառավարության որոշման նախագծեր, որոնցից 15-ը հաստատվել են:
- Նախարարության ենթակա կազմակերպություններից ընդունվել, ստուգվել և հաստատվել են շուրջ 171 նախահաշիվ, 115 տարիֆիկացիոն ցուցակ և 170 հաստիքացուցակ:
- 2016 թվականի ընթացքում զարգացման ծրագրերի և մոնիտորինգի վարչության հետ համատեղ մշակվել, ամփոփվել և ներկայացվել է քննարկման ՀՀ 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը: Կազմվել և մշակվել է ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի նախագծի կրթության և գիտության ոլորտի ֆինանսավորման հայտը ու սահմանված ժամկետում ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն:
- Իրականացվել են ՀՀ հարկային նոր օրենսգրքի նախագծում կրթության մասով դրույթների քննարկում և փոփոխությունների առաջարկներ, որոնց էական մասն ընդունվել է: Մասնավորապես նախագծից հանվել է բարձրագույն կրթության ուսման վարձը ավելացված արժեքով հարկելու դրույթը:
- Մշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի՝ ֆինանսատրման մասին գլուխը, օրենքի նախագիծը քննարկման փուլում է:

- Իրականացվել են ծրագրային բյուջետավորմանն անցման նախնական աշխատանքներ, թարմացվել են 2017 թվականի բյուջեի նախագծի մի շարք քանակական և որակական ցուցանիշներ:

### **ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

.ՀՀ ԿԳՆ 2016 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրով պլանավորվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- նախատեսված են եղել թվով 53 աուդիտի առաջադրանք՝ բոլոր 53-ն էլ բարձր ռիսկային,
- իրականացվել է մեկ չպլանավորված առաջադրանք՝ ՀՀ ԿԳՆ աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչությունում, ՀՀ ԿԳ նախարարի 2016 թվականի մայիսի 25-ի թիվ 267-Ա հրամանի հիման վրա: Չպլանավորված առաջադրանքների տեսակարար կշիռն ընդհանուր առաջադրանքների մեջ կազմում է 1.8 %:
- 2015 թվականին իրականացված աուդիտի արդյունքներով բացահայտված ռիսկերի կամ խնդիրների վերաբերյալ 2016 թվականին 5 աուդիտի ենթակա միավորներում իրականացվել է աուդիտ (վերստուգում) և նախկին թերությունների կրկնություն չի հայտնաբերվել:
- Ամենախոշոր առկա ռիսկերը՝ ԲՈՒՀ-երում գնումների ընթացակարգերի ոչ լիարժեք պահպանման և կատարման ռիսկերը, միջին մասնագիտական կրթության ոլորտում ֆինանսական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման ռիսկ հանրակրթական, մասնագիտական, գիշերօթիկ և արտադպրոցական ծրագրերով աշխատող կրթական հաստատություններում ապրանքանյութական արժեքների սխալ հաշվառում և հսկողական տարրերի ոչ պատշաճ կատարման ռիսկեր:

### **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Իրավաբանական վարչությունը աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ հանդիսանում է համակատարող օրենսդրական նախաձեռնություններում, ինչպես նաև իրականացրել է տարբեր գերատեսչություններից

ստացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումների, ՀՀ Կրթության և գիտության նախարարի նորմատիվ հրամանների նախագծերի վերաբերյալ կարծիքների, մասնագիտական եզրակացության տրամադրում, դատական մարմիններում նախարարության շահերի ներկայացում և պետական շահերի պաշտպանություն, իրավական օգնություն և համագործակցություն նախարարության աշխատակազմում կնքվող պայմանագրերի, կրթության և գիտության ոլորտին վերաբերող միջազգային, միջպետական պայմանագրերի և փոխըմբռնման հուշագրերի մշակման և կնքման աշխատանքներին:

### **ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ**

2016թ. հունվարի 8-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 19-ի ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության և շահագրգիռ նախարարությունների քննարկմանն է ներկայացրել թվով 9 ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են թվով 6-ը՝

- ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի N346-Ն որոշման համաձայն ավարտվել են թվով 15 պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնման-ընդունման գործընթացը:
- Վերահսկողություն է իրականացվել նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի նպատակային օգտագործման, վարձակալությամբ տրվող տարածքների և սեփականության իրավունքով տրված գույքի դուրսգրման և օտարման աշխատանքների նկատմամբ:
- Երևան քաղաքում չինարենի խորացված դպրոցի կառուցման նպատակով 06.04.2016թ.-ին կնքվել է համաձայնագիր «Չինաստանի աջակցությամբ Հայաստանում չինական դպրոցի կառուցման նախագծի իրականացման վերաբերյալ»:
- 2016 թվականի ընթացքում ավարտվել են «Ապարանի ռազմամարզական վարժարան» և «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ների հիմնանորոգման աշխատանքները. Այդ թվում՝

- 36000.0 հազ. ՀՀ դրամ՝ «Ապարանի ռազմամարզական վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի էլեկտրամոնտաժային, ջեռուցման, սանհանգույցների, տանիքի, խաղահրապարակի վերանորոգման և արտաքին գազաֆիկացման աշխատանքների իրականացում,
- 29,931.1 հազ. ՀՀ դրամ՝ «Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
- Վարկային ծրագրերի շրջանակներում ուսումնասիրված և ընտրված անհետաձգելի հիմնանորոգման կարիք ունեցող թվով 20 ավագ դպրոցներից 5-ում 2016թ.-ին սկսվել և իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ:
- 2016 թվականի ընթացքում սկսվել և ավարտվել են «Սպիտակի պետական քոլեջ» և «Ստեփանավանի Հ.Թումանյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ների հիմնանորոգման աշխատանքները/համապատասխանաբար՝ 10000,0 հազ. ՀՀ դրամ և 54000,0 հազ. ՀՀ դրամ /, իսկ «Ս.Հովսեփյանի անվան թիվ 115 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տանիքի վերանորոգման աշխատանքների/28000,0 հազ. ՀՀ դրամ/ իրականացման նպատակով կայացվել է մրցույթ:
- Քարտուղարության ընդհանուր բաժնում 2016թ հունվարի 8-ից մինչև դեկտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում մուտքագրվել է 25763 գրություն և 5078 դիմում: Նախարարի և աշխատակազմի ղեկավարի կողմից տրվել է 1343 հրաման:

## **ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

- Լրացուցիչ և շարունակական կրթության գաղափարախոսության տարածման և առկա քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացման նպատակով 2016 թվականի ընթացքում շարունակվել է «Լրացուցիչ և շարունակական կրթության գաղափարախոսությունը՝ որպես ՀՀ ՄԿՈՒ կարողությունների հզորացման նախապայման» ծրագրի իրականացման երկրորդ փուլը՝ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Լոռու, Տավուշի և

Գեղարքունիքի մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների, տարածքային զբաղվածության գործակալության ներկայացուցիչների և գործատուների մասնակցությամբ: Ծրագրի իրականացումը նաև միտված է եղել մասնագիտական ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների կողմից լրացուցիչ կրթություն կազմակերպելու և իրականացնելու կարողությունների հզորացմանը:

- Լրացուցիչ և շարունակական կրթության ոլորտի տեղեկատվական բազան համալրելու նպատակով 2016 թվականին իրականացվել է 2014-2015 թվականներին կազմակերպված և իրականացված լրացուցիչ կրթական ծրագրերի վերաբերյալ մշտադիտարկում՝ ՀՀ-ում գործող պետական և ոչ պետական բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող 180 ուսումնական հաստատությունների շրջանում: Ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում առանձնացվել են լրացուցիչ կրթական ծրագրերով կամզակերպվող այն մասնագիտությունները, որոնց պահանջարկն առավել մեծ է աշխատաշուկայում, համագործակցության ուղղությունները, սկզբունքները, ուսումնական հաստատությունների ուժեղ և թույլ կողմերը: Միաժամանակ ուսումնասիրվել են ուսումնական հաստատությունների կողմից ստացված այն դիտողություններն ու առաջարկությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ոլորտում առկա խնդիրների կարգավորման համար:
- Միաժամանակ 2016 թվականի ընթացքում լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կողմից շարունակվել են լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների համակարգման, բժիշկների և միջին բուժաշխատողների՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում վերապատրաստում անցնելու կազմակերպման աշխատանքները:

## **ՊԵՏԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ**

- ՀՀ և ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի հայտերի հավաքագրում և բաշխում.
- Հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվել է շուրջ 31900 հիմնական կրթության վկայական, 25700 միջնակարգ կրթության ատեստատ և 82 ոսկե մեդալ՝ գերազանց առաջադիմության համար:
- Նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուս. հաստատություններին հատկացվել է 3864 նախնական մասնագիտական կրթության դիպլոմ: Միջին մասնագիտական կրթության ուս. հաստատություններին հատկացվել է 8852 դիպլոմ:
- Բարձրագույն ուսումնական հաստատություններին հատկացվել է շուրջ 24000 դիպլոմ:
- Կատարվել է Բարձրագույն, միջին և նախնական /արհեստագործական/ մասնագիտական, հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների կորցրած և խոտանված ավարտական փաստաթղթերի արխիվային հիմքերի ստուգում, կրկնօրինակների տրամադրում, ավարտական փաստաթղթերի իսկության հաստատում: Մասնավորապես ստուգվել են 2500-ից ավել ավարտական փաստաթղթերի գործերի հիմքեր, որոնցից մի մասին տրամադրվել են կրկնօրինակներ:
- Կատարվել է ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, Վարչապետի աշխատակազմեր ներկայացվող պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի փաթեթի պատրաստում, ԿԳ Նախարարության պարգևների /հուշամեդալ, պատվոգիր, շնորհակալագիր/ հրամանների պատրաստում և տրամադրում: ՀՀ նախագահի, կառավարության և Ազգային ժողովի աշխատակազմ է ներկայացվել պետական պարգևներ, կոչումներ շնորհելու մասին փաստաթղթերի շուրջ 55 անձնական գործի փաթեթ: Պատրաստվել է 100-ից ավելի հրամանի նախագիծ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով, պատվոգրով և շնորհակալագրով պարգևատրելու մասին:

- Իրականացվել է «Հանրակրթական և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների դասամատյանների, գովասանագրերի և լիցենզիաների բաշխում, հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրերի տրամադրում: Մասնավորապես տրամադրվել է շուրջ 20706 դասամատյան, բաշխվել է 30000 գովասանագիր, հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ղեկավարման իրավունքի հավաստագիր է տրամադրվել 753 անձի, նախնական և մասնագիտական կրթության տնօրենի հավաստագիր՝ 85 անձի:
- Ավարտական փաստաթղթերի հաշվառման համակարգի էլեկտրոնային էջ՝ **students.armedu.am** հասցեով շրջանավարտների վերաբերյալ տվյալների տեղեկատվությունը շարունակական մուտքագրման ընթացքում է:

### **ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**

- Հաշվետու տարվա ընթացքում նախարարության քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի և աշխատողների ուսուցման շրջանակներում պլանավորվել և իրականացվել է նախարարության 12 աշխատակցի, իսկ ուսումնական հաստատություններից շուրջ 300 աշխատակցի ուսուցում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում:
- Նախարարության կենտրոնական ապարատում իրականացվել է 3 ուսումնավարժություն, այդ թվում՝ 2 շտաբային և 1 հրամանատարաշտաբային:
- Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հաշվետու տարվա ընթացքում կազմակերպած միջոցառումներին (ուսումնական հավաքներ, խորհրդակցություններ, սեմինարներ):

### **ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության կողմից 2016 թ-ի ընթացքում ապահովվել է նախադպրոցական, տարրական հանրակրթական, հիմնական հանրակրթական, միջնակարգ հանրակրթական, նախնական մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական, բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզավորման գործընթացը: Ներկայացված հայտերի հիման վրա կատարվել է փաստաթղթային փաթեթների ուսումնասիրություն, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում, որի արդյունքում՝

- ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններով նախադպրոցական կրթական ծրագրով լիցենզիա են ստացել 112, տարրական հանրակրթական ծրագրով՝ 9, հիմնական հանրակրթական ծրագրով՝ 8, միջնակարգ հանրակրթական ծրագրով՝ 5 ուսումնական հաստատություններ:

- Նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթական ծրագրով լիցենզիա է տրվել՝ 2, մասնագիտությունների գործունեության թույլտվության՝ 22 ուսումնական հաստատությունների ներկայացված հայտերի և փաստաթղթերի ուսումնասիրության հիմքով, պատրաստվել է եզրակացություններ և հրամանի նախագծեր:

- Միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնագիտությունների գործունեության թույլտվություն է տրվել հայտերի և փաստաթղթերի ուսումնասիրության հիմքով, պատրաստվել է թվով 21 եզրակացություններ և հրամանների նախագծեր:

- Բակալավրի կրթական ծրագրով լիցենզիա է տրվել՝ 1, մասնագիտությունների գործունեության թույլտվության՝ 9 ուսումնական հաստատությունների ներկայացված հայտերի և փաստաթղթերի ուսումնասիրության հիմքով, պատրաստվել է եզրակացություններ և հրամանի նախագծեր:

- Մագիստրոսի կրթական ծրագրով լիցենզիա է տրվել՝ 2, մասնագիտությունների գործունեության թույլտվության՝ 8 ուսումնական հաստատությունների ներկայացված հայտերի և փաստաթղթերի ուսումնասիրության հիմքով, պատրաստվել է եզրակացություններ և հրամանի նախագծեր:

- Վերածնակերպվել են ուսումնական հաստատությունների տարբեր կրթական ծրագրերով թվով 26 լիցենզիաներ և այդ հիմքով պատրաստվել է եզրակացությունների, հրամանների նախագծեր:



- Իրականացվել է ընդունելության սահմանային տեղերի փոփոխություն՝ թվով 20 ուսումնական հաստատությունների համար և այդ հիմքով պատրաստվել է եզրակացությունների, հրամանների նախագծեր:

- Կասեցվել են հանրակրթական ծրագրերի 4 լիցենզիաների գործողությունները և դադարեցվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով 3 լիցենզիաների գործողությունները՝ տնօրենների դիմումների համաձայն:

- Պատասխանվել է թվով 205 գրությունների:

- Օրենսդրական բարեփոխումներով պայմանավորված 2015 թ սկսվել և շարունակվում է իրականացվել բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով լիցենզիաների հիմքով տրված մասնագիտությունների համապատասխանեցումը ՀՀ կառավարության 2014 թվականի N 1191-Ն որոշմամբ հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկին:

- 2015 թվականի հոկտեմբերի 1-ին N 1139-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերին համապատասխան՝ հայտերի հիմքով, իրականացվել է նաև շուրջ 200 նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մասնագիտությունների համապատասխանեցման գործընթացը, որը շարունակելի է:

- Լիցենզավորման գործակալության կողմից ուսումնական հաստատություններում 2016թ. լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների պահպանման նպատակով ուսումնասիրություններ են իրականացվել 19 ուսումնական հաստատություններում, կատարվել է բազմակողմանի դիտարկումներ ու վերլուծություններ և ՀՀ կրթության և գիտության նախարարին են ներկայացվել համապատասխան եզրակացություններ, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով լիցենզիայի պարտադիր պայմանների ու պահանջների խախտման մասերով տրվել նախազգուշացումներ, սահմանվել ժամկետներ՝ խախտման վերացման վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարություն հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու համար:

- Իրականացվել է պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների տարբեր կրթական ծրագրերով գործունեությանն առնչվող, օրենքով նախատեսված ամենամյա շուրջ 1000 հաշվետվությունների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում:

- ՀՀ ԿԳ նախարարության կայքէջում թարմացվել են բարձրագույն, միջին, նախնական մասնագիտական և հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղեկատվական բազաները:

- Գործակալության կողմից տրվել են կարծիքներ գերատեսչությունների օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ և կատարվել են Կառավարության տարաբնույթ հանձնարարականներ՝ թվով 24:

- Լիցենզավորման գործակալության կողմից իրականացվել է կրթական ծրագրերի լիցենզավորման հանձնաժողովի թվով 8 նիստերի նախապատրաստական աշխատանքներ՝ հայտարարություններ մամուլում, նիստերի օրակարգի, քվեաթեթիկների, արձանագրությունների, եզրակացությունների և հրամանների նախագծերի պատրաստում:

- Գերատեսչական նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրերում սահմանված կարգով հրապարակելու համար ՀՀ արդարադատության նախարարություն է ուղարկվել թվով 8 գրություն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուսումնական հաստատություններին լիցենզիա տալու վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգի 2015 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակի ոչ հարկային եկամուտների գծով բյուջետային մուտքերի վերաբերյալ տեղեկանքները, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կրթական ծրագրերով տրված լիցենզիաների, և գործող լիցենզիաների հետ կապված փոփոխությունների մասին տեղեկատվություն:

**«ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»**  
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

- Վերանայվել և վերահաստատվել է Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկը, այն հայաստանյան գիտական ներուժին համապատասխանեցվելու միտումով.
- Ստեղծվել է ԲՈՀ-ի՝ թվով 62 մասնագիտական խորհուրդների ցանցը, ընդ որում 1-ին անգամ մասնագիտական խորհուրդ կգործի նաև Գյումրիում և Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում.
- Բուհերում և գիտական կազմակերպություններում գործող մասնագիտական խորհուրդներից ատենախոսությունների պաշտպանություններից հետո մուտքագրվել է 420 գիտական աստիճանի որակավորման գործ, պետական չափանիշներին ատենախոսությունների համապատասխանությունը ստուգելու նպատակով ուսումնասիրվել է /նաև տրվել կարծիքի/.
- Հանձնվել է 465 գիտական աստիճանի վկայագիր /34 դոկտոր և 431 թեկնածու/:
- Բեկանվել կամ կրկնական քննարկման է ուղարկվել 46 աշխատանք /6 դոկտոր և 39 թեկնածու/՝ արտագրության հայտնաբերման /16 դեպք/ և բացասական կարծիքների հիմնավորմամբ.
- Բուհերից և գիտական կազմակերպություններից մուտքագրվել է գիտական կոչման 265 որակավորման գործ, ուսումնասիրվել է, հաստատվել և հանձնվել է 288 գիտական կոչման դիմում /68 պրոֆեսոր և 220 դոցենտ/.
- Մուտքագրվել և ուսումնասիրվել է օտարերկրյա պետություններում ստացած գիտական աստիճանի համապատասխանեցման 37 գործ և հանձնվել է համապատասխանեցման հավաստագիր.
- ՀՀ Պետական բյուջեից համակարգին հատկացված միջոցների սահմաններում կատարվել է մասնագիտական խորհուրդների ֆինանսավորումը կայացած պաշտպանությունների համար, նաև

հնարավորության սահմաններում տրվել են կանխավճարներ 2017թ. նախատեսվող պաշտպանությունների համար:

- Ըստ կարգի իրականացվել է աշխատանքների ստուգում համապատասխան մասնագետների ներգրավմամբ և կատարվել է նրանց ֆինանսավորումը.
- Պարբերաբար կատարվել է ԲՈՀ-ի ինտերնետային կայքի ([www.boh.am](http://www.boh.am)) համապատասխան բաժինների համալրում: Կայքում տեղադրված է անհրաժեշտ ողջ տեղեկատվություն.
- Արխիվացվել են 2004-2009 թթ. գիտական աստիճանների և 2008-2010թթ. գիտական կոչումների որակավորման գործերը: Ներկայումս կարվում են 2009-2012թթ. գիտական աստիճանների գործերը.
- Ազգային գրադարանի հետ արդեն 2 տարի կնքվել է պայմանագիր 1993 թվականից առ այսօր ԲՈՀ-ի հետ համատեղ ատենախոսությունների թվայնացման գործընթացը սկսելու և ավարտին հասցնելու նպատակով: Արդեն թվայնացվել է շուրջ 2000 աշխատանք՝ ըստ բնագավառների: Ազգային գրադարանի հետ կնքվել է նոր պայմանագիր 2017թ. աշխատանքները շարունակելու համար.
- Հրատարակվել է ԲՈՀ-ի 2 տեղեկագիր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակով.
- Իրականացվել են նաև այլ ընթացիկ աշխատանքներ՝ ատենախոսությունների թեմաների հաստատման թույլտվություններ, պարբերականների ցուցակի հաստատում, գիտական ղեկավարների թույլտվություններ, հատուկ պաշտպանությունների կազմակերպում, դիմումների և նամակների պատասխաններ

- Պարբերաբար հրավիրվել են կոլեգիայի նիստեր՝ վերը նշված հարցերը քննարկելու և լուծումներ գտնելու նպատակով:

### **ԼԵՂՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

- «Լեզվի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու, հայերենի կիրառությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով Լեզվի պետական տեսչությունը կատարել է հետևյալ աշխատանքները:
  - Մայրաքաղաքի ճարտարապետական շինությունների լեզվական ձևավորման, հրապարակային գրվածքների վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու նպատակով շրջայցեր են կազմակերպվել և գույքագրում է կատարվել Երևան, Ինչպես նաև Սյունիքի մարզի Գորիս, Կապան և Կոտայքի մարզի Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքներում, գույքագրվել է լեզվական օրենսդրության պահանջների խախտմամբ ձևավորված հրապարակային գրվածքները, կատարել լեզվավիճակի դիտարկում և նախնական վերլուծություն, տնտեսավարողներին պարզաբանվել է լեզվի բնագավառը կարգավորող օրենսդրությունը: Տնտեսավարող սուբյեկտները տեղեկացվել են նաև, որ տվյալ աշխատանքն այս փուլում իրենց համար չի առաջացնում որևէ իրավական հետևանք, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 30.07.2015թ. N839-Ա որոշման՝ 2015 թվականի հուլիս ամսից կասեցվել են ստուգումներն ու վարչական վարույթները:
- Երևան քաղաքի Մաշտոցի, Կոմիտասի և Սայաթ-Նովայի պողոտաներում, Կորյունի, Հանրապետության, Թումանյան, Բաղրամյան, Աբովյան, Նալբանդյան, Ամիրյան, Սարյան, Պուշկինի, Ալեք Մանուկյան, Իսահակյան, Մոսկովյան փողոցներում, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում, Դավթաշեն վարչական շրջանում հայտնաբերվել է ոչ հայերեն ձևավորված 230 (երկու հարյուր երեսուն) հրապարակային գրվածք, Գորիս և Կապան քաղաքներում՝ համապատասխանաբար 48( քառասունութ) և 57(հիսունյոթ), Հրազդան

քաղաքում՝ 28( քսանութ), Չարենցավանում՝ 44( քառասունչորս), Ծաղկաձորում՝ 57(հիսունյոթ):

- Ոչ հայերեն ձևավորված հրապարակային գրվածքները գույքագրելուց և նախնական վերլուծություն կատարելուց հետո հրապարակային գրվածքները միայն օտար լեզվով ձևավորած տնտեսավարող սուբյեկտներին տրվել են իրազեկման թերթիկներ:
- Ընդհանուր հաշվով գույքագրված ոչ հայերեն ձևավորմամբ 464 հրապարակային գրվածքից միայն օտարալեզու և (կամ) օտարատառ ձևավորմամբ է 271-ը:
- ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի բ) կետի պահանջի կատարումն ապահովելու նպատակով հետևել է հեռուստատեղի լեզվական մակարդակին, լեզվական ուսումնասիրության է ենթարկել տարբեր ԶԼՄ-ների («Արմենիա», «Կենտրոն» ՀԸ-եր, «Հրապարակ» թերթ, էլեկտրոնային մամուլը՝ Մամուլ.ամ, Միտք.ամ, Պոլիտիկ. ամ, Ասպարեզ.ամ, նյուզ.ամ) գրավոր և եթերային լեզուն, ներկայացրել հոդվածներ, ամփոփագրեր, հորդորակներ: Հայկական 12 հումորային ֆիլմերի լեզվական մակարդակի վերաբերյալ կազմվել է մեկ ամփոփագիր: Կազմվել է նաև «Անահիտ» մուլտֆիլմի լեզվական վերլուծությունը:
- Լեզվական քննության է ենթարկել հանրակրթական դպրոցների (շուրջ 15 դասագիրք): Նախատեսվում է կազմակերպել արդյունքների վերլուծություն և քննարկում հեղինակների, մասնագետների և փորձագետների հետ համատեղ:
- Տեսչության աշխատակիցները մասնակցել են Տեսչական բարեփոխումների խորհրդի կազմակերպված «Կարգավորման հիմնական հմտություններ» ծրագրով դասընթացներին:

## **ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Վերահսկողություն (մշտադիտարկում) ՀՀ ավագ դպրոցների սովորողների հաճախումների նկատմամբ՝ 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում: Մշտադիտարկման արդյունքները 15-օրյա պարբերականությամբ ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին:
- Ստուգումներ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Ագարակի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի թվով 53 նախադպրոցական ուսումնական հաստատություններում (22.02.2016թ.-14.05.2016թ., 07.11.2016թ.-18.11.2016թ.): *Ստուգումների արդյունքում 44 մանկապարտեզներում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 52 ակտ:*
- Ուսումնասիրություններ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի, Մեղրիի, Քաջարանի, Ագարակի, ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածնի քաղաքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում 07.03.2016թ.- 14.05.2016թ.14.11.2016թ.-18.11.2016թ.: ՀՀ Արարատի, Լոռու, Տավուշի մարզապետարանների կրթության, մշակույթի և սպորտի վարչություններում (համապատասխանաբար 22.02.2016թ.-12.03.2016թ., 28.03.2016 թ.- 15.04.2016թ., 27.06.2016թ.-13.07.2016թ.):
- Դիտարկումներ ՀՀ Շիրակի մարզի թվով 4, Տավուշի մարզի թվով 2, Վայոց ձորի մարզի թվով 2 ՀՀ կրթական երրորդ աստիճանի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում (02.03.2016թ.-12.03.2016թ.):
- Ստուգումներ\_Երևանի Արաբկիր վարչական շրջանի թվով 13, Էրեբունի վարչական շրջանի թվով 12, Քանաքեռ – Զեյթուն վարչական շրջանի թվով 15 նախադպրոցական ուսումնական հաստատություններում (համապատասխանաբար՝ 14.03.2016 թ.-25.03.2016թ., 25.04.2016թ.-

13.05.2016թ., 10.10.2016թ.-04.11.2016թ.): *Ստուգումների արդյունքում մանկապարտեզներից 37-ում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 37 ակտ:*

- Տեսչական ստուգումներ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի, Գյումրու հ. 4, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ.1, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի, Նաիրիի, Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններում (11.04.2016թ.-22.04.2016թ., 19.04.2016թ.-03.05.2016թ., 31.10.2016թ.-11.11.2016թ.): *Ստուգումների արդյունքում Ամասիայի, Բյուրեղավանի, Նաիրիի և Երևանի զարդակիրառական արվեստի արհեստագործական պետական ուսումնարաններում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 4 ակտ:*
- ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների հաճախումների ուսումնասիրություն (մշտադիտարկում):
- Վերահսկողություն ՀՀ երկրորդ և երրորդ աստիճանի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողների ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ (03.06.2016 թ.-22.06.2016թ.): Ուսումնասիրության արդյունքում քննությունների կազմակերպման և անցկացման կարգի խախտումներ չեն արձանագրվել:
- Ուսումնասիրություն ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) թվով 25 ուսումնական հաստատությունների (20.06.2016թ.-01.07.2016թ.) սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանման գործընթացի: *Ուսումնասիրության արդյունքում ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ չեն արձանագրվել:*



- Վերահսկողություն դրսեկության ձևով (էքստեն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ (17.10.2016թ.-15.11.2016թ.): *Քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգի խախտումներ չեն արձանագրվել:*
- ՀՀ Շիրակի մարզի թվով 47 և ՀՀ Սյունիքի մարզի թվով 23 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի ուսումնասիրություններ (համապատասխանաբար՝ 03.10.2016թ.-28.10.2016թ., 06.11.2016թ.-26.11.2016թ.): *Ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ Շիրակի մարզի թվով 44 և ՀՀ Սյունիքի մարզի թվով 22 հանրակրթական ուսումնական հաստատություններում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է 66 արձանագրություն:*
- Ստուգում կամ ուսումնասիրություն դիմումներում, ահազանգերում բարձրացված խնդիրների: 2016թ. ՀՀ կրթության պետական տեսչությունում ստացվել է 34 դիմում (ներառյալ «Թեժ գիծը»):
- Ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդների նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:
- Ուսումնական հաստատություններից ստացվել են հանձնարարականների վերաբերյալ կատարողականներ, դրանք համադրվել են հանձնարարականների հետ, արդյունքները ներկայացվել են հաշվետվություններում: ՀՀ մարզպետարանների և քաղաքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում իրականացված ուսումնասիրությունների, դիտարկումների ընթացքում հայտնաբերված կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումների վերբերյալ կազմվել են տեղեկանքներ: Ստուգումների, ուսումնասիրությունների, դիտարկումների արդյունքները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարին, համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին:

## ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

2016 թվականի ընթացքում ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գործունեության հիմնական ուղղություններն են եղել.

- Մշակվել են 10-ից ավելի իրավական ակտերի նախագծեր, որոնցից՝ ՀՀ Նախագահի հրամանագիր՝ 2, ՀՀ կառավարության որոշում՝ 8, ՀՀ վարչապետի որոշում՝ 1:

### Մրցույթներ

- *Ամփոփվել են* 2015 թ.-ին հայտարարված բարձր արդյունավետությամբ աշխատող մինչև 35 տարեկան երիտասարդ գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի արդյունքները: Ներկայացվել էր 123 հայտ: Մրցույթի արդյունքում 31 երիտասարդ գիտաշխատողի մեկ տարի ժամկետով տրամադրվելու է հավելավճար՝ ամսական 75000 դրամ՝ ներառյալ հարկերը:
- *Հայտարարվել և կազմակերպվել է* գիտական ծրագրերի ֆինանսավորման ներպետական 5 և միջազգային 6 մրցույթ:
- Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթ: Ներկայացվել է 239 հայտ: Մրցույթի արդյունքում 97 գիտաշխատողի մեկ տարի ժամկետով տրամադրվում է հավելավճար՝ ամսական 135000 դրամ՝ ներառյալ հարկերը:
- Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ՝ մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով: Ներկայացվել է 22 հայտ, ֆինանսավորման են երաշխավորվել 9-ը:
- Բարձր արդյունավետությամբ հատուկ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներին աջակցության տրամադրման հայտերի ընտրության մրցույթ: Ներկայացվել է 21 ծրագիր, ֆինանսավորման են երաշխավորվել 4-ը:

- «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2016» մրցույթ:
- «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2016» մրցույթ:
- Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության հետ համատեղ մրցույթ: Ներկայացվել է 24 հայտ:
- Հիմնարար հետազոտությունների բելառուսական հիմնադրամի հետ համատեղ մրցույթ: Ներկայացվել է 57 հայտ:
- Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Թեմի հետ համագործակցության շրջանակներում մրցույթ: Ներկայացվել է 12 հայտ:
- Ռուսաստանի Դաշնության «Հարավային դաշնային համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության հետ համատեղ մրցույթ: Ներկայացվել է 7 հայտ:
- Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ համատեղ մրցույթ (ընթացքում է):
- Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի հետ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ նախագծերի մրցույթ՝ հայաստանյան և ռուսաստանյան գիտահետազոտական խմբերի համար: Ներկայացվել է 22 հայտ:
- 4-11-րդ կետերում նշված մրցույթների արդյունքները կամփոփվեն 2016 թվականի վերջին և 2017 թվականի սկզբին:

#### **Փորձաքննություն**

- Կազմակերպվել է 2015 թ. վերջին, ինչպես նաև 2016 թ. հայտարարված մրցույթների հայտերի գիտական փորձաքննությունը:
- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գիտական փորձաքննության համակարգի միջոցով կազմակերպվել է ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի

նախարարության կողմից կազմակերպվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված թեմաների ընտրության մրցույթին ներկայացված հայտերի, ինչպես նաև իրականացված նախագծերի ամփոփիչ հաշվետվությունների գիտական փորձաքննությունը:

- ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից 2016 թվականին կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված 5 հայտերի գիտական փորձաքննությունը՝ անկախ փորձագետների ներգրավմամբ, ստացվել են թվով 10 փորձագիտական եզրակացություններ, որոնք փոխանցվել են ԼՂՀ:
- Իրականացվել է «ՀՀ ԿԳ նախարարության և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման մասին» մտադրությունների հուշագրի շրջանակներում անցկացվող գիտական ու գիտատեխնիկական համատեղ նախագծերի մրցույթին ներկայացված 24 հայտերի վերլուծություն:

### **Ֆինանսավորում**

Կազմակերպվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի ֆինանսավորման գործընթացները:

**Բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում»** ծրագիր

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի ենթածրագրերի շրջանակներում ֆինանսավորում/աջակցություն է տրամադրվել 70 կազմակերպության 168 ծրագիր համար՝

| h/<br>h | Գերատեսչական պատկանելություն     | Կազմակերպությունների քանակ | Ծրագրերի քանակ |
|---------|----------------------------------|----------------------------|----------------|
| 1       | ՀՀ ԳԱԱ նախագահություն և համակարգ | 35                         | 41             |

|   |   |    |     |
|---|---|----|-----|
| 2 | ՀՀ առողջապահության նախարարություն                   | 8  | 8   |
| 3 | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն                 | 4  | 4   |
| 4 | ՀՀ մշակույթի նախարարություն                         | 5  | 5   |
| 5 | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>(բուհեր) | 15 | 105 |
| 6 | ՀՀ տարածքային կառավարման<br>նախարարություն          | 1  | 1   |
| 7 | ՀՀ Նախագահի աշխատակազմ                              | 1  | 3   |
| 8 | Երևանի քաղաքապետարան                                | 1  | 1   |
|   | Ընդամենը  | 70 | 168 |

այդ թվում՝ ըստ ենթածրագրերի՝

- «**Գիտական միջոցառումների կազմակերպման աջակցություն**» ենթածրագիր՝ **28** կազմակերպությունների **39** գիտական միջոցառումների կազմակերպման համար:

- «**Երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման աջակցություն**» ենթածրագիր՝ **9** կազմակերպությունների **11** երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպման համար:

- «**Համակարգի գիտական գործուղումների իրականացում**» ենթածրագիր՝ **13** կազմակերպությունների **28** գիտաշխատողների՝ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար:

- «**Գիտական հրատարակումների և գիտության մասսայականացման աջակցություն**» ենթածրագիր՝ **9** կազմակերպությունների՝ 4 ֆիլմի պատրաստում, 3 գրքի և 1 ուսումնական ձեռնարկի տպագրություն, 1 թերթի գիտական հավելվածի պատրաստում:

- «**Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում**» ենթածրագիր՝ **9** կազմակերպությունների՝ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար:

**բազային ֆինանսավորման «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն»** ծրագիր

|    |                              |          |        |
|----|------------------------------|----------|--------|
| h/ | Գերատեսչական պատկանելություն | Կազմակեր | Ծրագրե |
|----|------------------------------|----------|--------|

| h |   | պություններ<br>ի քանակ | րի<br>քանակ |
|---|---|------------------------|-------------|
| 1 | ՀՀ ԳԱԱ նախագահություն և համակարգ                    | 3                      | 3           |
| 2 | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>(բուհեր) | 2                      | 2           |
|   | Ընդամենը  | 5                      | 5           |

### պետական նպատակային ծրագրեր

| h/<br>h | Գերատեսչական պատկանելություն   | Կազմակեր<br>պություններ<br>ի քանակ | Ծրագրե<br>րի<br>քանակ |
|---------|--|------------------------------------|-----------------------|
| 1       | ՀՀ ԳԱԱ համակարգ  | 6                                  | 6                     |
| 4       | ՀՀ մշակույթի նախարարություն  | 2                                  | 2                     |
|         | ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և<br>բնական պաշարների նախարարություն | 1                                  | 1                     |
| 2       | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>(բուհեր)                  | 4                                  | 4                     |
|         | ՀՀ կառավարությանն առընթեր գործող<br>հիմնադրամի                       | 1                                  | 1                     |
|         | Ընդամենը   | 14                                 | 14                    |

### պայմանագրային (թեմատիկ) ծրագրեր

| h/<br>h | Կազմակերպատիրավական վիճակը | Կազմակեր<br>պություններ<br>ի քանակ | Ծրագրե<br>րի<br>քանակ |
|---------|----------------------------|------------------------------------|-----------------------|
| 1       | Հիմնադրամ                  | 6                                  | 88                    |
| 2       | ՊՈԱԿ                       | 29                                 | 72                    |
| 3       | ՓԲԸ                        | 4                                  | 6                     |
| 4       | ՍՊԸ                        | 3                                  | 3                     |

|   |                               |  |     |
|---|-------------------------------|--|-----|
| 5 | Արցախի հետ համագործակցություն |  | 6   |
|   | Ընդամենը                      |  | 175 |

### **Շարունակվել են ֆինանսավորվել՝**

- «Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր-2015» մրցույթի շրջանակներում իրականացվող 5 գիտական թեմա

- «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող 5 գիտական թեմա:

**«Գիտաշխատողներին գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ» ծրագրի** շրջանակներում հավելավճարներ են տրվել 614 գիտությունների դոկտորի և 1573 գիտությունների թեկնածուի:

### **Գիտական կազմակերպությունների անձնագրավորում**

Կատարվել է 2013-2014 թվականների ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրավորման տվյալների վերլուծություն:

ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրավորումը առցանց իրականացնելու նպատակով լրամշակվել է «ՀՀ գիտական կազմակերպության անձնագրի» ձևաթուղթը:

Իրականացվել է ՀՀ գիտության ոլորտին առնչվող թվով 81 գիտական կազմակերպություններից աշխատակիցների տեղեկատվության պարբերական (եռամսյակային) հավաքագրում, վերլուծություն և մշակում: Կատարված աշխատանքի արդյունքում եռամսյակային պարբերականությամբ իրականացվել է համապատասխան բազայի թարմացում: 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վերոնշյալ էլեկտրոնային բազայում առկա են տեղեկություններ 614 գիտությունների դոկտորի և 1573 գիտությունների թեկնածուի մասին:

Կազմակերպվել են միջազգային համագործակցության պայմանագրերի/հուշագրերի մշակման և կնքման աշխատանքները.

- «Հորիզոն-2020՝ հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագիր (2014-2020)» Միության ծրագրին ՀՀ մասնակցության մասին» համաձայնագիր,
- «Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիա ստեղծելու մասին» մտադրությունների հուշագիր,

- «ՀՀ ԿԳ նախարարության և Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության միջև համատեղ գիտահետազոտական և համալսարանական ծրագրերի իրականացման մասին» փոխըմբռնման հուշագիր,
- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, Երևանի պետական համալսարանի և «Հարավային դաշնային համալսարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության միջև «Գիտատեխնիկական ու նորարարության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիր,
- ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացման աջակցման հիմնադրամի միջև համագործակցության մասին համաձայնագիր,
- «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի միջև հայագիտական հետազոտությունների ոլորտում համագործակցության մասին» մտադրությունների հուշագիր,
- «ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի և Հնդկաստանի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների նախարարության գիտության և տեխնոլոգիաների դեպարտամենտի միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» արձանագրություն:
- Շարունակվել է հայ-ռուսական և հայ-բելառուսական համագործակցության շրջանակներում իրականացվող «ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2014», «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015», «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2015» մրցույթների արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 50 համատեղ գիտական ծրագրերի ֆինանսավորումը,
- Շարունակվել է հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակներում իրականացվող 2 միջազգային լաբորատորիաների և 1 միջազգային գիտական խմբի ծրագրերի իրականացումը:



Կազմակերպվել են միջազգային նշանակություն ունեցող միջոցառումներ.

- 2016 թ. հոկտեմբերի 19-21-ը՝ «Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի օրերը Հայաստանում»:
- 2016 թ. նոյեմբերի 17-ին՝ «Արևելյան գործընկերության գիտության նախարարների ոչ պաշտոնական երկխոսություն»։ Հայաստան էին ժամանել ԵՄ հանձնակատարներ Յոհաննես Հանը և Կարլոս Մոեդաշը, Սլովակիայի կրթության, գիտության, հետազոտության և սպորտի նախարար Պետեր Պլավչանը, Ուկրաինայի կրթության և գիտության նախարար Լիլիա Գրինևիչը, Վրաստանի կրթության և գիտության նախարարի տեղակալ Թամազ Մարսագիշվիլին, Բելառուսի Գիտության պետական կոմիտեի նախագահ Ալեքսանդր Շումիլինը և Մոլդովայի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Գեորգի Դուկան:
- 2016 թ. դեկտեմբերի 9-ին աշխատաժողով՝ նվիրված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից պատրաստված Հայաստանի ինովացիոն զարգացման զեկույցի եզրակացությունների իրականացմանը և կայուն զարգացման նպատակներին հասնելու մեջ գիտահիմնովացիոն գործունեության դերին: Միջոցառմանը մասնակցելու համար Հայաստան էր ժամանել ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի պատվիրակությունը:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

### **Ձեռքբերումներ**

- Ստեղծվել է Կրթության ազգային ինստիտուտի կրթական ակադեմիան YouTube-ում՝ <https://www.youtube.com/user/ruzaniko>, որտեղ տեղադրված են 46 կրթական բովանդակությամբ տեսադասեր, որոնք դիտվել են մոտ 79000 անգամ: Կրթական ակադեմիան նման է Խան ակադեմիային, և նրա միջոցով հիմք է դրվել արդի ժամանակաշրջանում տարածում ունեցող ինտերակտիվ ուսուցման առցանց

ակադեմիայի ստեղծմանը, որը պարբերաբար համալրվում է նոր կրթական ռեսուրսներով: Կրթական ակտիվում կան տեսադասեր հետևյալ թեմաներով՝

- C++ ծրագրավորման լեզվի,
- ինտերնետի,
- Corel Draw և Adobe Photoshop գրաֆիկական խմբագրիչների,
- Microsoft Math ծրագրի, որը տրամադրում է գրաֆիկական հաշվիչ, քայլ առ քայլ հավասարումների լուծում եւ օգտակար գործիքների խումբ, որոնք կօգնեն աշակերտներին և ուսանողներին ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափության, ֆիզիկա և այլ գիտություններ,
- Microsoft Word տեքստային խմբագրիչի,
- Microsoft Excel ծրագրի,
- Google Drive, Google Calendar, Google Streak, [www.prezi.com](http://www.prezi.com) առցանց գործիքների վերաբերյալ:

Ստեղծվել է ԿԱԻ-ի Ինֆորմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կրթական կայքը՝ [www.informatika.am](http://www.informatika.am), որտեղ տեղադրված են՝

- HTML-ի առցանց դպրոց, որի միջոցով կայքի այցելուները կսովորեն կայքերի պատրաստման համար անհրաժեշտ HTML լեզուն,
- Corel Draw ծրագրի առցանց դպրոց, որի միջոցով կայքի այցելուները կսովորեն աշխատել գրաֆիկական խմբագրիչ հետ,
- թեստեր, որոնք ունեն ինքնագտահատման հնարավորություն,
- ինֆորմատիկայի դասագրքեր,
- անվճար ծրագրեր, որոնք հնարավոր է ներբեռնել,
- տեսադասեր՝ համակարգչային ծրագրերի վերաբերյալ,
- համակարգչային հնարքներ, որոնք կարելի է օգտագործել կիրառական և ծառայողական ծրագրերը կիրառելիս,
- էլեկտրոնային գրքեր,
- կրթական կայքերի հղումներ,
- գործնական աշխատանքներ Microsoft Word, Microsoft Excel, Microsoft Access Photoshop, Corel Draw ծրագրերից
- օրինակելի թեմատիկ պլաններ,

- շնորհանդեսներ՝ տարբեր առարկաների վերաբերյալ:
- Մշակվել է «Սոցիալական ցանցերը որպես հեռավար ուսուցման գործիք» ծրագիրը, որի նպատակն է աջակցել մանկավարժների սոցիալական մեդիայի և թվային գործիքների կիրառման զարգացմանը, ինչպես նաև ուսումնական և կառավարման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: Այս ծրագրով հեռավար եղանակով վերապատրաստում են անցել ՀՀ մարզերի գյուղական դպրոցների 32 ուսուցիչներ: Ծրագիրը շարունակական է:
- Ուսուցիչներին դասավանդման ժամանակակից մեթոդների հիմնական դրույթներին և նորագույն կրթական տեխնոլոգիաներին ծանոթացնելու նպատակով «Smart էլեկտրոնային գրատախտակի կիրառումը հանրակրթական դպրոցում» ծրագրով իրականացվել են հանրակրթական դպրոցների 362 ուսուցիչների վերապատրաստումներ: Ծրագիրը այս պահին շարունակվում է ՀՀ մարզերում, այն շարունակական է:
- Technovation կազմակերպության հետ համատեղ իրականացվում է աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական ձեռներեցության վերապատրաստում-մրցույթը աղջիկների համար: Ծրագիրը նախատեսում է 12 շաբաթյա ուսուցում: Ուսուցման ընթացքում աղջիկները իրենց համայնքում կբացահայտեն որևէ սոցիալական խնդիր և կպատրաստեն բջջային հավելված՝ լուծելու այդ խնդիրը: Ծրագրի հովանավորներն են՝ Google, Intel, Salesforce, Adobe, Verizon, LinkedIn, Oracle, Yahoo, CA Technologies, Lemann Foundation, AVG Technologies, SAP eBay աշխարհահռչակ ընկերությունները:

### **Վերապատրաստումներ**

ԿԱԻ-ն իր մասնաճյուղերի հետ միասին կազմակերպել և իրականացրել է հանրակրթական հաստատությունների մանկավարժական կադրերի տարբեր ժամաքանակներով վերապատրաստման հետևյալ դասընթացները.

- Ըստ նախօրոք մշակված և հաստատված նոր ծրագրի և մոդուլների ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա 5892 ուսուցիչների,
- ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա 479 ուսուցիչների,

- ԱՄՆ Խաղաղության կորպուսի հետ համատեղ 94 անգլերենի ուսուցիչների հեռավար վերապատրաստում,
  - ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների «Ազգային երգ և պար» առարկայի շուրջ 118 ուսուցիչների,
  - ՀՀ հանրակրթական դպրոցների ասորերեն լեզու դասավանդող 12 ուսուցիչների,
  - ՀՀ հանրակրթական դպրոցների եզդիերեն դասավանդող 31 ուսուցիչների
- Արտերկրի 16 երկրներից ժամանած սփյուռքահայ 68 ուսուցիչների:
  - Կազմակերպվել և իրականացվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի և հավաստագրի 225 հավակնորդների, ներառական դպրոցի կարգավիճակ հայցող 76 դպրոցների 2139 մանկավարժական աշխատողների, տնօրենների ուսումնական աշխատանքի գծով 87 տեղակալների, տնօրենների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով 67 տեղակալների, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների 43 կազմակերպիչների, 48 հոգեբանների, հատուկ մանկավարժներ 22, լոգոպեդներ 28, նախադպրոցական ուսումնական հաստատությունների 847 մասնագետների /տնօրեններ, դաստիարակներ, երաժշտության դաստիարակներ, ֆիզ հրահանգիչներ/ վերապատրաստման դասընթացներ:

### **Փորձաքննություն**

ԿԱԻ-ի կողմից փորձաքննության են ենթարկվել 126 անուն /34752 էջ/ հանրակրթական և բուհական չափորոշիչներ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ, ուսումնաօժանդակ գրականություն:

### **Բովանդակային մշակումներ**

Հանրակրթական պետական չափորոշչով նախատեսված սովորողների կարողությունների և հմտությունների, ինչպես նաև մանկավարժական աշխատողների առարկայական-մեթոդական զարգացման ուղղությամբ կատարվել են 130 անուն բովանդակային և մեթոդական մշակումներ (ձեռնարկներ, ուղեցույցներ, հոդվածներ և այլն):

2016-2017թ.թ. ուստարում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման վերաբերյալ կազմվել և հրատարակվել են համապատասխան մեթոդական նամակներ:

## **ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

## **Մշակվել են՝**

- Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների նախագծերը,
- 2016-2017 ուսումնական տարում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի անվանացանկը

## **Խորհրդատվություն**

2016թ. ընթացքում ուսուցիչներին տրամադրվել է խորհրդատվություն կրթական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի գնահատման չափանիշների, մշտադիտարկման, դասի պլանավորման (դասապլանների մշակում, դասի տարբեր փուլերում կիրառվող ժամանակակից մեթոդներ), ներառական կրթության գործընթացի կազմակերպման, սկսնակ ուսուցիչների առջև ծագած խնդիրների պարզաբանման, քննակարգի, թեստերի հետ տարվող աշխատանքների ծանոթացման, ուսումնաօժանդակ միջոցների օգտագործման (գրատետրեր, ուսումնական պաստառներ, ուսումնաօժանդակ գրականություն և այլն), ուսումնական տարբեր բնագավառների միասնացման (ինտեգրման), գնահատման համակարգի կիրառման արդյունավետության, դպրոցներում կազմակերպվող միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:

## **Մանկավարժական մամուլի հրատարակում**

Հրատարակվել են 10 անուն/53 համար/ մանկավարժական ամսագրեր:

## **ՄԿՈՒՉԱԿ**

2016թ. Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնը հաստատված տարեկան աշխատանքային պլանին համապատասխան իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Մշակվել է նախնական և միջին մասնագիտական կրթության 12 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչների նախագծեր: Չափորոշիչների նախագծերը համապատասխան ոլորտային հանձնաժողովների կողմից փորձաքննություն անցնելուց հետո հաստատվել են ՀՀ

ԿԳ նախարարի հրամանով և գործողության մեջ են դրվելու 2017 թվից: Մշակված չափորոշիչներին համապատասխան կազմվել են նաև նույն մասնագիտությունների ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը:

- Վերանայվել են նախկինում մշակված և գործողության մեջ դրված նախնական և միջին մասնագիտական կրթության 20 մասնագիտությունների ու որակավորումների պետական կրթական չափորոշիչները: Վերանայված չափորոշիչներին համապատասխան կազմվել են նաև ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը:
- Մասնագիտական կրթության համակարգի աշխատողների և համակարգի աշխատանքներում ներգրավված այլ անձնակազմերի անձանց համար իրականացվել են վերապատրաստումներ, որոնց ընթացքում վերապատրաստվել են՝
  - ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների 145 տնօրեններ և փոխտնօրեններ՝ ՄԿՈՒ պլանավորման և կատարողականի կառավարման հարցերով,
  - ՄԿՈՒ հաստատությունների 934 դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ,
  - ՄԿՈՒ 10 ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների 41 անդամներ,
  - պետական կրթական չափորոշիչների նախագծեր մշակող 27 փորձագետներ:

ՄԿՈՒ 30 ուսումնական հաստատություններում մշտադիտարկում է անցկացվել պետական կրթական չափորոշիչների ներդրման և դրանց պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերով: Մշտադիտարկմանը զուգահեռ առաջացած հարցերի վերաբերյալ անց է կացվել նաև այդ հաստատությունների 487 աշխատակիցների վերապատրաստում:

Հայաստանի ՄԿՈՒ համակարգի աշխատանքի, իրականացվող բարեփոխումների ընթացքի և արդյունքների վերաբերյալ հանրությանը և շահառուներին տեղեկացնելու նպատակով մամուլում տպագրվել են անհրաժեշտ նյութեր: Հեռուստատեսությամբ հեռարձակվել է «Համաշխարհային հմտություններ» մրցույթին Հայաստանի մասնակցության վերաբերյալ ֆիլմ:

## ԱՓՇԱՏԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇԱՏԿ) հիմնադրամը, 2016թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է գործունեությունը միաժամակ երեք հիմնական ուղղություններով՝

- Պետական և մասնավոր կառույցներին տրամադրվել է տեղեկատվություն այլ երկրների կրթական համակարգերի, շնորհվող որակավորումների, որակավորումների ազգային շրջանակների, նախկին փորձառության ճանաչման, համատեղ աստիճանների, կրթական փաստաթղթերի իսկության և այլնի վերաբերյալ: Ակտիվ համագործակցություն է տեղի ունեցել ՀՀ կրթության և գիտության, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության, Արդարադատության նախարարությունների, դրանց ստորաբաժանումների (քրեակատարողական հիմնարկներ, փրկարար ծառայություն և այլն), ՀՀ բուհերի և այլ պետական ու մասնավոր մարմինների հետ:
- Անհատ քաղաքացիներին տրամադրվել են հիմնականում խորհրդատվական և որակավորման գնահատման տեղեկանքներ: Տրամադրված տեղեկանքները ուղղված են խթանելու անհատների շարժունությունը այլ երկրներում ուսումը շարունակելու և/կամ աշխատանքի անցնելու նպատակով:
- Ապահովվել է համագործակցություն՝ միջազգային կառույցների հետ, որը հիմնականում ներառում է ԷՆԻԿ-ՆԱՐԻԿ (ENIC-NARIC) ցանցի անդամներին, Համաշխարհային կրթական ծառայությունը (World Education Services), Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամը (International Education Research Foundation), արտասահմանյան միգրացիոն ծառայությունները, ՀՀ-ում գործող դեսպանատները, ինչպես նաև օտարերկրյա ուսումնական հաստատությունները և այլն:
- ԱՓՇԱՏԿ-ի կողմից ուսումնասիրված գործերի ընդհանուր քանակը 2016 թվականին կազմել է մոտ 900 գործ:

- Նորվեգիայի և Իտալիայի ազգային տեղեկատվական կենտրոնները (Norwegian ENIC-NARIC և Italian ENIC-NARIC) ԱՓՇԱՏԿ-ին ներառել են որպես գործընկեր կազմակերպություն՝ Եվրահանձնաժողովի կողմից ֆինանսավորվող «NARIC Call 2016-2018» Եվրոպական կենտրոնների համար նախատեսվող ծրագրերում:
- Հիմնադրամը շարունակել է ակտիվորեն մասնակցել Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի բյուրոյի աշխատանքներին, որտեղ 2016թ-ին շարունակվել են նոր օրենսդրական նախաձեռնությունների մշակումները՝ հիմնական շեշտադրում կատարելով փախստականների որակավորումների ճանաչմանը:

## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

### «Կրթության բարելավում» վարկային ծրագիր

«Հանրակրթության որակի բարելավում» բաղադրիչի «Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթաբաղադրիչը իրականացվում է դեռ 2008 թվականից մեկնարկած պիլոտային «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրով: Ըստ այդմ՝ նախկինում ստեղծված և մինչ օրս գործող մոտ 280 նախակրթաանների թիվը նախատեսվում է 120-ով ավելացնել:

- 2015 թվականին 33 նախակրթարաններ են հիմնվել հետևյալ 3 մարզերում՝ Գեղարքունիք (8), Կոտայք (13) և Շիրակ (12): Այդ նախակրթարաններում ընդգրկված է մոտ 1170 երեխա: Կրթության ազգային ինստիտուտի կողմից վերապատրաստվել են բոլոր 3 մարզերի 33 նախակրթարաններում ընդգրկված թվով 79 դաստիարակները:
- 2016 թվականի ընթացքում 24 նոր նախակրթարաններ են հիմնվել Տավուշի (6), Լոռու (6) և Արմավիրի (12) մարզերում: Տավուշի մարզի 6 համայնքներից 4-ը ընդգրկված են ՀՀ Կառավարության 28.12.2014թ. N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում, հետևաբար տվյալ համայնքներում նախադպրոցական



միկրոծրագրերն ամբողջապես իրականացվել են դրամաշնորհային միջոցներից, ի տարբերություն մյուս համայնքների, որոնք կատարել են ծրագրի արժեքի նվազագույնը 10%-ի ներդրում: Նորաբաց նախակրթարանները գործում են սույն թվականի նոյեմբերի 1-ից և դրանցում ընդգրկված է մոտ 750 երեխա:

- 2017-2018թթ. միկրոծրագրեր կիրականացվեն Սյունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում, իսկ 2018-2019թթ.՝ Երևանում, Վայոց Ձորի մարզում և այլ մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
- Ծրագրի շրջանակներում ակնկալվում է մինչև 2019 թվականը հիմնել մոտ 120 նախակրթական հաստատություններ << համայնքներում՝ ընդգրկելով նվազագույնը 2400 5-6 տարեկան երեխաների՝ այդպիսով 5-6 տարեկան երեխաների համար նախադպրոցական կրթությունը դարձնելով համընդհանուր և ապահովելով ընդգրկվածության աճ այդ տարիքային խմբի երեխաների համար:
- Ծրագրի արդյունավետությունը գնահատելու նպատակով նախակրթարանների ստեղծմանը զուգընթաց իրականացվում է ընթացքում հիմնված նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների զարգացման դինամիկայի գնահատում, համեմատում նախադպրոցական հաստատություններ չընդգրկված երեխաների հետ: Ուսումնասիրվում է նաև երեխաների զարգացման դինամիկայի վրա ազդող գործոնների հետազոտություն: Ավարտվել է Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում հիմնված նախակրթարաններում իրականացված հետազոտությունները: Հաշվետվության արդյունքները դրական են: Մասնավորապես, նախակրթարան հաճախող երեխաների մոտ ընդհանուր մաթեմաթիկական գիտելիքներից արձանագրվել է **23.93%** աճ, իսկ վաղ գրաճանաչության ուսուցման ոլորտում **29.98%** աճ տարեսկիզբ տարեվերջ հարաբերակցությամբ:

**«Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը»  
ենթաբաղադրիչի շրջանակներում 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ.**

- «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է մոտ 17 ավագ դպրոցի հիմնանորոգում: Հիմնանորոգվող դպրոցները ընտրվել են ՀՀ ԿԳ նախարարության կողմից մշակված և Համաշխարհային բանկի կողմից հաստատված չափանիշների հիման վրա, որտեղ բացի շենքային պայմանների գնահատականից, հաշվի է առնվել դպրոցի կառուցման տարեթիվը, սպասարկող ոլորտը և աշակերտների թիվը: 2016 թվականին մեկնարկել է 5 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման աշխատանքները՝ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Շինարարական աշխատանքները սկսվել և շարունակվում են համաձայն աշխատանքային գրաֆիկների: Պատրաստվել են նաև թվով 12 ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը:
- «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև բոլոր ավագ դպրոցներում հիմնել բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն և կենսաբանություն) լաբորատորիաներ: Ավագ դպրոցում ուսուցումը, հատկապես հոսքային ուսուցումը ավելի արդյունավետ կազմակերպելու, կրթությունը գործնական գիտելիքներով զինելու համար, դպրոցներին լաբորատոր սարքավորումների տրամադրումը գերազանց միջոց է այն սովորողների համար, որոնք ուղղորդման, փորձի, գիտելիքների հարստացման կարիք ունեն: Արդեն համապատասխան մասնագետների կողմից մշակվել են բնագիտական առարկաների գծով գնման ենթակա լաբորատոր սարքավորումներ համակազմը՝ ներառելով, տեխնիկական հատկորոշիչները, մեկ լաբորատորիայի համար նախատեսված սարքավորումների քանակը, ինչպես նաև առաջարկվել է լաբորատորիաների կահավորման մոդելներ (ինչ տիպի կահույք և հարմարանքներ կպահանջվեն համապատասխան լաբորատորիաները գործարկելու նպատակով):

**«Հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը» ենթաբաղադրիչ շրջանակներում 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ**

- 2016 թվականին շարունակվելու է «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում իրականացված ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն առարկաների առարկայական չափորոշիչներով նախատեսված լաբորատոր աշխատանքների և ցուցադրությունների էլեկտրոնային ռեսուրսների տեսքով մշակում: «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում սկսվել է ՏՀՏ վերապատրաստումների կարիքների գնահատման, ՏՀՏ կիրառմամբ առարկաների դասավանդման համար վերապատրաստման մոդուլների մշակման և վերապատրաստողների վերապատրաստման աշխատանքների ուղղությամբ գործառույթի նախապատրաստումը: Այդ նպատակով «Ազենս Յունիվերսարի դե Լա Ֆրանկոֆոնին» կազմակերպությունը ներկայացրել է տեխնիկական և ֆինանսական առաջարկ՝ ՏՀՏ վերապատրաստման կարիքների գնահատման, մոդուլների մշակման և վերապատրաստողների վերապատրաստման ուղղությամբ: Բանակցությունների արդյունքում ֆինանսական առաջարկը նշանակալի կրճատվել է, տեխնիկական առաջարկում կատարվել են համապատասխան լրամշակումներ և պարզաբանումներ: Ընթացքում են պայմանագրի կնքման աշխատանքները:
- 2016 օգոստոսին ԿՏԱԿ-ի կողմից մեկնարկել է մասնագիտական և հանրակրթական կառավարման տեղեկատվական համակարգերի մեկ միասնական համակարգի մեջ ինտեգրման աշխատանքները, այն կավարտվի 2017թ. հունվարին: Արդյունքում, այն կօգնի Հայաստանի բոլոր կրթական հաստատություններից տվյալների հավաքագրման և վիճակագրական վերլուծությունների կատարման գործում, որը համակարգված ձևով կմատուցվի հանրությանը : «Կրթության բարելավում» ծրագիրը աջակցում է նաև ԿՏԱԿ-ի կարողությունների հզորացմանը: Ավարտվել են ԿՏԱԿ-ի նոր տարածքի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Հիմնանորոգման աշխատանքների կատարման համար կազմակերպության ընտրության նպատակով պետք է հայտարարվի մրցույթ: Սկսվել է ԿՏԱԿ-ի տեխնիկական կարողությունների հզորացման համար նախատեսված նոր տվյալների մշակման կենտրոնի (Data centre) նախագծման և կառուցման աշխատանքները իրականացնելու նպատակով տեխնիկական առաջադրանքի մշակվումը: Նոր նախագծված տվյալների մշակման կենտրոնում (Data centre)

հաշվի կառնվեն ներկայում պահանջվող տեխնիկական հզորությունները, ինչպես նաև նախատեսվող ավելացող հզորությունները: Այն հնարավորություն կտան ԿՏԱԿ-ին լիարժեք իրականացնել իր առջև դրված տեխնիկական խնդիրները:

**«Աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով» ենթաբաղադրիչի շրջանակներում 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ**

- «Ի-վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ն «ԱՅԲ» կրթական հիմնադրամի հետ համատեղ շարունակվել և ավարտվել է հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտությունը: Նախնական հաշվետվությունը քննարկվել է այդ նպատակով կազմակերպված աշխատաժողովում, որին մասնակցել են ՀՀ ԿԳՆ, «Ի-վի Քոնսալթինգ» ՓԲԸ-ի, «Այբ» կրթական հիմնադրամի ԿԱԻ ղեկավարները, 50-ից ավելի մասնագետներ: Աշխատաժողովում արված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կազմվել է գնահատման հետազոտության վերջնական հաշվետվություն, որը համաձայն պայմանագրի ԾԻԳ է ներկայացվել մարտ ամսին: Հետազոտության արդյունքների հիման վրա պետական կրթակարգը և չափորոշիչների վերանայումն ապահովելու նպատակով ՀՀ ԿԳՆ 30.03.2016թ. N216 Ա/2 հրամանի համաձայն ստեղծվել է հանրակրթության պետական չափորոշիչի նախագծի մշակումն համակարգող հանձնաժողով, որի ապրիլի 6-ի որոշմամբ ձևավորվել է համապատասխան աշխատանքային խումբ: Նշված խումբը մշակել է հանրակրթության պետական կրթակարգի, չափորոշիչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման հայեցակարգը, այնուհետ՝ «Ազգային կրթակարգ» նախագիծը, որը ԿԳՆ համակարգող հանձնաժողովի և հանրային քննարկումների արդյունքում ստացված դիտողությունների հիման վրա լրամշակվել է: Նախագծի վերջնական տարբերակը համակարգող հանձնաժողովի նոյեմբերի 11-ի նիստի որոշմամբ հիմք է ընդունվել ՀՀ կառավարության ծրագրին համապատասխան՝ Արարատյան բակալավրիատի և գերազանցության ծրագրի համադրմամբ Ազգային կրթակարգի վերջնական ձևավորման համար: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

**«Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանը»  
բաղադրիչի շրջանակներում 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ**

- 2016թ Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (այսուհետ՝ ՆԱՀ) շրջանակներում 6 բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ՀՀ Պետական կառավարման ակադեմիա, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևանի պետական համալսարան)՝ նորարարական ծրագրեր են իրականացվել՝ համաձայն 2015թ. դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրերի: Ծրագրերի իրականացումը կավարտվի 2017թ. դեկտեմբերին: Դրամաշնորհային ծրագրերի բուհական աշխատակիցների համար ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից 2016 թ. փետրվարի 2-3-ը կազմակերպվել և իրականացվել է աշխատաժողով՝ ծրագրերի գնումների, ֆինանսական և իրականացման այլ ընթացակարգերի պարզաբանման նպատակով: Իրականացվել են նախատեսված գնումների գործընթացները, որոնք դիտարկվել և հաստատվել են ԿԾԿ ԾԻԳ-ի և/կամ Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից: Բուհերն ավարտել են փուլային աշխատանքները, ներկայացրել փուլային ֆինանսական և ծրագրային հաշվետվությունները, որոնք դիտարկվել են ԿԾԿ ԾԻԳ-ի կողմից: Ծրագրերի իրականացման ընթացքում մասնագիտական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2016 թ. փետրվարին ընտրվել են ոլորտային փորձագետներ, որոնք տարվա ընթացքում տրամադրել են անհրաժեշտ խորհրդատվությունը: Ստեղծվել է դրամաշնորհային ծրագրերի մոնիտորինգի խումբ, որը տարվա ընթացքում երկու անգամ՝ հուլիսին և դեկտեմբերին, այցելել է բուհեր: Մոնիտորինգի ընթացքը լուսաբանվել է ԿԾԿ ԾԻԳ-ի կայքում համապատասխան հոդվածների հրապարակման միջոցով:
- Հաշվետու ժամանակաշրջանում քննարկվել է ՆԱՀ շրջանակներում ևս մեկ փուլ կազմակերպելու հարցը, որին մասնակցության իրավունք էր տրվում մինչ այդ ՆԱՀ դրամաշնորհառու չհանդիսացած և իրավասության այլ պահանջներին բավարարող բուհերը: Այս որոշումը հաստատվել է ՆԱՀ համակարգող խորհրդի կողմից 2016 թ. մայիսի 2-ին: Հարցը համաձայնեցվել է նաև ՀԲ հետ 2016 թ. հունիսի 3-ին: Ըստ

այդմ՝ փոփոխվել է ՆՄՀ ղեկավար ձեռնարկը և հաստատվել ՀԲ և ՀՀ ԿԳ նախարարի կողմից: ՆՄՀ համակարգող խորհուրդը հաստատել է հավելյալ փուլի գերակա ուղղությունները: 2016 թ. հուլիսի 25-ին հրապարակվել է ՆՄՀ շրջանակներում բուհերին դրամաշնորհների տրամադրման հավելյալ փուլի իրականացման մրցույթի հայտարարությունը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2016 թ. հոկտեմբերի 25-ը:

- ՆՄՀ շրջանակներում դրամաշնորհների տրամադրման հավելյալ փուլի կազմակերպման գործընթացի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է նաև ՀՀ բուհերի դրամաշնորհային հայտերի գնահատման փորձագետների ընտրությունը: ՆՄՀ շրջանակներում դրամաշնորհների տրամադրման հավելյալ փուլի կազմակերպման գործընթացի շրջանակներում 2016թ. սեպտեմբերի 27-28-ին կազմակերպվել և իրականացվել է երկօրյա աշխատաժողով պոտենցիալ շահառու բուհերին դրամաշնորհային հայտերի մշակման հարցում անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով: Սահմանված վերջնաժամկետում ներկայացվել է ինը հայտ ութ բուհերի կողմից: Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը ներկայացրել է երկու հայտ: Հայտերի ներկայացումից հետո իրականացվել է դրանց ամբողջականության և իրավասության ստուգում: Բուհերին ըստ անհրաժեշտության գրվել են նամակներ՝ պակասող և ոչ ամբողջական լրացված փաստաթղթերի լիարժեք ներկայացման պահանջով: Բուհերի կողմից պահանջվող փաստաթղթերի ներկայացումից հետո բոլոր ամբողջական և իրավասու ութ հայտերը տրվել են գնահատման: Փորձագետների կողմից իրականացվել է հայտերի գնահատում: Գնահատման արդյունքներով ՆՄՀ համակարգող խորհուրդը 2016 թ. դեկտեմբերի 15-ին կայացրել է որոշում ֆինանսավորման ենթակա ծրագրերի վերաբերյալ: Ըստ այդմ, հավելյալ շրջափուլի ընթացքում կիրականացվեն վեց ծրագրեր հետևյալ բուհերի կողմից՝ Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտ, Շիրակի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևանի պետական կոնսերվատորիա, Գլաձոր համալսարան, Հյուսիսային համալսարան:

## ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

- Իրականացվել են 1420 կրթական ուսումնական հաստատություններ ընդգրկող Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) սպասարկման, կառավարման և ցանցային սարքավորումների պահպանման աշխատանքները: Ուսումնական հաստատություններին տրամադրվել են պահուստային կապի միջոցներ (յուրաքանչյուր դպրոցին մեկական 3G մոդեմ):
- Վայոց Ձորի մարզում «Մեկ երեխա – մեկ համակարգիչ» ծրագրի փորձնական փուլի շրջանակներում մարզի բոլոր դպրոցների տարրական դասարանների համար նախատեսված տարածքներում ապահովվել է անլար կապի ծածկույթ, իսկ առնվազն 5 ՄԲ/վրկ թողունակությամբ կապուղով դպրոցները միացվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցին:
- ՀԿՑ տեխնոլոգիական հնարավորություններն օգտագործվել են գյուղական դպրոցների մասնակցությամբ հեռավար տեսադասեր կազմակերպելու ընթացքում:
- Շահագործվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանը. Հայաստանի Հանրապետության 2 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 16 համայնքներում կազմակերպվել են դասընթացներ 315 աշակերտի և 226 ուսուցչի համար:
- Շահագործվել է «Հայկական կրթական միջավայր» պորտալը (<http://www.armedu.am/>), հարստացվել է բովանդակային պարունակությունը: Գործարկվել են «Հայկական կրթական միջավայրի» ենթակայքերը և կրթական այլ կայքեր, մասնավորապես «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (<http://forum.armedu.am>)
- Ստեղծվել են շուրջ 80 նոր թեմաներ (ընդամենը՝ 1130 թեմա), կատարվել են 1260 գրառումներ (ընդամենը՝ 15310 գրառում), գրանցվել են 300 օգտվողներ (ընդամենը՝ 4340 գրանցված օգտվող): Հանրային քննարկման են ներկայացվել կրթական փաստաթղթերի նախագծեր, կազմակերպվել են մասնագիտական

խորհրդատվություններ և ուսումնական գործընթացին վերաբերող տարբեր քննարկումներ:

- «Հեռավար ուսուցում» համակարգով (<http://learning.amedu.am/>). ուսուցիչների համար կազմակերպվել են «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով 4 դասընթացներ (մասնակցել են 91 ուսուցիչ, 51-ը ստացել են հավաստագրեր) և ուսումնական առարկաների 56 հեռավար դասընթացներ (ընդհանուր առմամբ «Հեռավար ուսուցում» համակարգում կազմակերպվել են շուրջ 140 դասընթացներ՝ գրանցված 1740 մասնակիցների համար):
- «Պաշարների շտեմարան» կայքը (<http://lib.amedu.am>). ըստ դասակարգված բաժինների տեղադրվել է ավելի քան 2090 նոր ուսումնամեթոդական էլեկտրոնային պաշար (պաշարների ընդհանուր քանակը՝ 5732), գրանցվել են ավելի քան 1050 նոր օգտատիրոջներ (գրանցվածների ընդհանուր քանակը՝ 2367):
- Ստեղծվել է Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի մասին տեղեկատվություն ապահովող կայքը (<http://etwinningplus.amedu.am/>):
- Ստեղծվել է «Հանրակրթությունը Հայաստանում. Վիճակագրական տեղեկատու» (<http://stat.amedu.am/>), «Ավարտական փաստաթղթերի և հաշվառման համակարգ» (<http://students.amedu.am/>), «Դպրոցների ազգային վարկանիշավորման համակարգ» (<http://schoolrate.amedu.am/>) և «Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգ» (<http://ranking.amedu.am/>, <http://rank.amedu.am/>) կայքերը:
- «Դպրոցական կայքեր» (<http://schoolsite.am/>) կայքը. ըստ մարզեր և ըստ կրթության կազմակերպման ձևի տեղադրվել են ուսումնական հաստատությունների կայքերի հղումները: Նոր կայքերի ստեղծման նպատակով 626 ուսումնական հաստատությունների տրամադրվել են ենթադրմեններ, կայքի հայալեզու կադրապար և մուտքի հնարավորություն, ցուցաբերվել է խորհրդատվական աջակցություն (ընդհանուր թվով <http://schoolsite.am/> միջավայրում գրանցված են 830 կայքեր):



- Շահագործվել են «Մասնագիտական կրթություն և ուսուցում» պորտալը (<http://vetarmenia.am/>), «Բարձրագույն կրթությունը Հայաստանում» (<http://studyinarmenia.org/>) և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (<http://ktak.am/>) կայքերը:
  - Իրականացվել են աշխատանքներ հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքման, մշակման, վերլուծության և հրապարակման ուղղությամբ:
  - Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում (ԴԿՏՀ) կատարվել են ծրագրային թարմացումներ, ԴԿՏՀ-ին Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ) ինտեգրման ենթահամակարգի ստեղծման աշխատանքներ:
  - Հրատարակվել է 2016-2017 ուսումնական տարվա Ձև 1 «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվային ձևը, թղթային և էլեկտրոնային տարբերակներով իրականացվել են դպրոցների վիճակագրական տվյալների հավաքագրման և մուտքագրման աշխատանքներ:
  - Հրատարակվել է «Կրթություն և տեխնոլոգիա 2016» վիճակագրական տեղեկագիրը և բաշխվել շահագրգիռ կազմակերպություններին:
- ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների և տնօրենների շրջանում իրականացվել են ՏՀՏ կարիքի ուսումնասիրություն (<http://lib.amedu.am/resource/14656>) և ՏՀՏ կիրառման հետազոտության (<http://lib.amedu.am/resource/14655>) իրականացում, տվյալների հավաքագրում և ստուգում, բազաների մաքրում, որակի վերահսկում, վերլուծություն և հաշվետվության ներկայացում:
- Ցուցաբերվել է աջակցություն ու մասնակցություն ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Գործընկերներ ուսման ոլորտում» (Partners in Learning, PiL) փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում անցկացված միջոցառումներին. Մայքրոսոֆթ ընկերության հետ համատեղ իրականացվել են այցեր տարբեր մարզերի 13 դպրոցներ (Երևան՝ 3, Արարատի մարզ՝ 2, Կոտայքի

մարզ՝ 4, Գեղարքունիքի մարզ՝ 3, Արմավիրի մարզ՝ 1)։ բարձր դասարանի աշակերտներին ներկայացվել են SCS և համացանցի ստեղծման և զարգացման պատմությունը, համացանցը որպես գիտելիքների աղբյուր օգտագործելու հնարավորությունը, անվտանգության հիմնական կանոնները։

- Կազմակերպվել են գործուղումներ Արցախ. քննարկվել են համագործակցության, նոր ծրագրերի իրականացման, կրթական SCS-ների ներդրման շարունակականության հարցերը։ Հանրակրթության պատասխանատուների հետ հանդիպման ընթացքում ծանոթացել են համագործակցության շրջանակներում կատարվող աշխատանքների ընթացքին և արձանագրված արդյունքներին, մասնավորապես՝
- Իրականացվել են աշխատանքներ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի շրջանակներում, մասնաորապես համակարգվել է ծրագրի մասնակից 84 դպրոցների շուրջ 350 ուսուցիչների աշխատանքը, ծրագրում ընդգրկված ուսուցիչների համար անցկացվել են տեղեկատվական-ճանաչողական առցանց 18 հանդիպում-սեմինարներ։
- Ապահովվել է մասնակցություն Աջակցող գործընկեր կազմակերպությունների աշխատանքային հանդիպումներին (Լեհաստան, Իտալիա, Բելգիա, Հունաստան) և ուսուցիչների սեմինար խորհրդակցություններին (Մալթա, Սլովակիա, Լեհաստան, Իտալիա, Հունաստան)։
- Նախապատրաստվել և Հայաստանում (Աղվերանում) անցկացվել է ուսուցիչների միջազգային սեմինար-խորհրդակցություն ինը երկրների (Ավստրիա, Գերմանիա, Լեհաստան, Լիտվա, Ֆրանսիա, Իտալիա, Կիպրոս, Սլովակիա, Հայաստան) 56 մասնակիցների համար։
- Կազմակերպվել է ծրագրի 2016թ. ամփոփման և իԹՎինինգ Պլյուս Որակի ազգային հավաստագրի և մրցանակների շնորհման միջոցառումը։
- Կրթական հաստատություններում «Մայքրոսոֆթ» ընկերության արտոնագրված ծրագրային համակարգեր օգտագործելու նպատակով ՀՀ կառավարության և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված պայմանագրի շրջանակում ձեռք են բերվել Windows և Office ծրագրային համակարգերի 18000 արտոնագրեր, որոնք տրամադրվել են ՀՀ կրթական ուսումնական հաստատություններին։

- Կատարվել են աշխատանքներ բուհերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016թ. վարկանիշավորման ուղղությամբ.
  - ՀՀ բուհերի և հանրակրթական դպրոցների վարկանիշավորման համակարգերի քննարկման և լրամշակման նպատակով կազմակերպվել է քառօրյա աշխատաժողով, ԿԳ նախարարության, ԿՏԱԿ, ՈԱԱԿ, ԿՊՏ, ԿԱԻ, ՀՀ բուհերի ներկայացուցիչների, հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցների տնօրենների ու մարզերի հանրակրթության վարչության պետերի ներկայացրած առաջարկությունների հիման վրա կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանն է ներկայացվել վարկանիշավորման մեթոդաբանությունների փոփոխությունների նախագիծը, վերոնշյալ լրամշակման հիման վրա իրականացվել են ծրագրային փոփոխություններ էլեկտրոնային համակարգերում:
  - Հրապարակվել և բաշխվել են «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» ու «Հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման ազգային համակարգ» հարցաթերթիկների լրացման ուղեցույց-ձեռնարկները:
  - Իրականացվել է ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման շրջանակում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն(<http://lib.armedu.am/resource/10620>):